№ 126 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 12 ՅՈՒՆԻՍԻ

1912

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 12 ՅՈՒՆԻՍԻ № 126

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամենուրեք

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSHAK“.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎՃԱՐԸ 6 ՌՈՒԲ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԻՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

„ՄՇԱԿԻ“ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Խնդրվում է այն բաժանորդներին, որոնք վճարել են տարեկան բաժանորդավճարի կէս մասը, ուղարկել նաեւ երկրորդ մասնավճար 5 րուբլին, որպէսզի թերթի առաքման գործում յուլիսի 1-ից ընդհատում տեղի չունենայ:

Երեքշաբթի, յունիսի 12-ին, երեկոյեան ժամը 7-ին
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
(Արաս-Արաղսկի հրապարակ) կայանալու է
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
անդամների արտակարգ ընդհանուր ժողով, ընկերութեան
ՏԱՍՆԱՄԵԱԿԻ առիթով
Զբաղմունքի առարկաներն են՝
ա) Ընկերութեան կանոնադրութեան փոփոխում.
բ) Հայ բեմական գործիչների համագումար:
գ) Թատրոնական ֆոնդ:
ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Այս ժողովը կայացած կը համարվի անկախ ներկայ եղող անդամների թւից, որովհետև առաջին անգամ նշանակված էր յունիսի 3-ին, և չը կայացաւ՝ բաւարար թւով անդամներ ներկայ չը լինելու պատճառով:
(և.) առ. 429. 2—2

Բառասանամեակ „Մշակի“ «Տարազի» Յոբելեանական №-ն Ալմանախ ՎԷԼԷՆՕՎԻ ԹՂԹԻ վրա, յատուկ կազմում, պատկերներն առանց ծալելու, „Մշակի“ գունաւոր թղթակիցների համար (սահմանափակ) փոխանակ 10 ռ. ԵՐԵՔ ռուբլի: Նոյնը իլլիւստրասիօնի («ՏԱՐԱԶԻ») թղթի վրա 1 ռ. 50 կ.: ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ №-ի հետ 2 ռ.:
Դիմել՝ БЮРО ПЕЧАТИ. Тифлисъ, Голов. пр. 41.
26. 10—3

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Բաժանմունքը Թիֆլիսում, Գոլ. պր. 21, տուն Արտիստական Ընկ., տէլէֆօն № 355.
Պահեստումս կան մեծ քանակութեամբ բոլոր պաստառներ ամենավերջին ոճով,
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչև 6 ռ. իւրաքանչիւր րուլօն: Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում:
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՁՐԻ:
(և.ու.) առ. 154. 50—27

ԲԺԻՇԿ
Ձ. Ա. ԹԱՌՈՒՄԵԱՆՑԸ
Վերադառնալով Թիֆլիս՝ նորից հիւանդների ընդունելութիւնը երեկոյեան ժամը 4-ից—6-ը, բացի կիրակի օրերից: Կիրակի օրերը հիւանդների ընդունելութիւն կը լինի ՄԵԾ-ԴԱՐԱԲԻԼԻՍԱՅՈՒՄ առաւօտեան ժամը 10-ից՝ տեղական դեղատանը:
Թիֆլիսի հասցէն՝ Մեծ-Վանքի փող., № 15 (Վանքի եկեղ. դիմաց):
Բացի այդ՝ բժիշկը կատարում է միկրօսկօպիական և քիմիական հետազօտութիւններ մէզի, մաղասի, արեան և այլն էկսպերիմէնտներ:
(և. հ. շ. կ.) առ. 398. 5—5

ՄԵՐ ԽՈՐԻՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» խմբագրութիւնը իր բարոյական սեպուհ պարտականութիւնն է համարում իր խորին և անկեղծ շնորհակալութիւնն յայտնել բոլոր այն ազգային և օտարազգի կրթական, գիտական, կուլտուրական, հասարակական, եկեղեցական հաստատութիւններին, ընկերութիւններին, քաղաքային ինքնավարութիւններին, լրագիրների և հանդէսների խմբագրութիւններին, միջնակարգ և բարձր դպրոցների ուսանողներին, համերկրացիութիւններին, առևտրական, արհեստաւոր և բանւոր դասակարգերի ներկայացուցիչներին, բոլոր խմբակցութիւններին և անհատներին, որոնք շնորհաւորեցին «Մշակի» 40-ամեայ գործունէութեան յոբելեանը հեռագիրներով, ուղերձներով, շնորհաւորական գրութիւններով, պատգամաւորութիւններով և նուիրատուութիւններով:

Համազգային և միջազգային միահամուռ և բուռն համակրութեան այդ արտայայտութիւնները խրախուսելով «Մշակի» 40-ամեայ գործունէութիւնը՝ պարտք են դնում խմբագրութեանս վրա աւելի մեծ եռանդով և աւիւնով գործել ժողովրդի լուսաւորութեան, կուլտուրայի և պրօգրէսի գործի համար:

«Մշակը» ինչպէս մինչև այժմ, նոյն և այսուհետև իր գործունէութեան մէջ պէտք է ընթանայ իբրև լայն պրօգրէսիվ դեմօկրատիական և ազգային-ազատամտական օրգան:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Պետերբուրգից դիւանապետ Բագրատ վարդապետը հեռագրում է Նիբէմ եպիսկոպոսին ամսիս 10-ին.

Վաղը, երկուշաբթի, Նորին Սրբութեանը նշանակված է Բարձրագոյն ընդունելութիւն Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդօրովնայի մօտ:

Այսօր Նորին Սրբութեանը այցելութիւն տուին մինիստրների խորհրդի նախագահ Կոկօվցեվը և ներքին գործերի մինիստր Մակարօվը:

Երեքշաբթի, յունիսի 12-ին, երեկոյեան նշանակված է Վեհափառի մեկնումը Մոսկվա:

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 յունիսի

Պետերբուրգ.—Կաթողիկոսը այցելեց Կայսերական Տան դամբարանը, աղօթեց Ալէքսանդր III Կայսրի գերեզմանի վրա, նոյնեց Պետրոս-Պօղոսի տաճարը և նոր դամբարանը:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
9 և 10 յունիսի

Բօղայբօ.—Սենատոր Մանուխինը երէկ արժանացաւ ստանալ հետևեալ հեռագիրը Կայսրից. «Յանձնարարում եմ ձեզ հաղորդել Լէնայի ընկերակցութեան հանքերի բանւորներին Իմ շնորհակալութիւնը Ինձ արտայայտած հաւատարմութեան զգացմունքների համար: ՆԻԿՈԼԱՅ»:

Պետերբուրգ. — Իշխան Դոլգօրուկիի մարմինը փոխադրվեց Ալէքսանդր Նեվսկիի տաճարը: Պատարագին ներկայ էին Կայսրը և Կայսրուհի Մարիա Ֆէօդօրօվնան:

Կայսրը և Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնան Դահաժառանգի և Օգոստափառ Աղջիկների հետ բարեհաճեցին տեղափոխվել ամառը ապրելու համար Պետերհօֆ՝ «Ալէքսանդրիա» ամարանոցը:

Կովկասի Փոխարքայի անձնափոխանորդը թոյլատրեց Գէօրգիևսկ քաղաքին կնքել 50,000 ռ., Ալէքսանդրօպօլ քաղաքին 240,000 րուբլու փոխառութիւն՝ քաղաքային հերթական կարիքների համար:

Օդեսսա. — «Բօլգարիա» շոգենաւի մարդիկ պատմում են, որ Դունայի վրա «Կօրօլէվա Եղիզավէտա» շոգենաւի հրդեհի ժամանակ զոհվել են 16 մարդ: Տասը սատցել են վէրքեր:

Կահիրէ.— Եգիպտական լրագիրները հաղորդում են, որ սուլթանը խղդիվին դիպլօմատիական յանձնարարութիւն է տուել Մեծ-Բրիտանիայի Թագաւորի առաջ, վերաբերեալ ներկայ պատերազմին: Յարուցվելու է նաև Եգիպտոսի հարցը:

Լիսաբօն.—Երեկ. ժամը 11-ին Դօնա-Պէտրօ հրապարակի վրա պայթեցին երեք ռումբ: Հեծելազօրը ցրեց ամբոխին: Ատրճանակների գնդակներից սպանվեց 1, վիրաւորվեցին մի քանի մարդ: Քաղաքում շրջագայում են զինւորական պահակներ, որոնք ցրում են համախմբումները: Կառավարութիւնը ամեն միջոց ունի կարգուկանոնը վերականգնելու համար:

Սենատոր Կօստան, դուրս գալով պարլամենտի շինութիւնից, ենթարկվեց ամբոխի յարձակման, որ նրա վրա քարերի տարափ տեղաց: Սենատորը, պաշտպանվելով, կրակում էր ատրճանակից:

Չիկագօ.—Հանրապետական կօնվէնտի նիստում պատգամաւորների լիազօրութիւնները քննող յանձնաժողովը վճռեց բոլոր վիճելի կէտերը յօգուտ Տաֆտի կողմնակիցների: Րուզվէլտի համախոհները անվերջ սուլում էին: Մի կողմից բարձրագոչ ձայների և միւս կողմից սուլոցների մէջ, Րուտը ընտրվեց կօնվէնտի մշտական նախագահ: 20 րօպէ շարունակվող աղմկալի ցոյցը փոխվեց ծեծ ու ջարդի, որ վերջ դրեց ոստիկանութիւնը: Րուզվէլտի կողմնակիցները վճռեցին հիմնել նոր կուսակցութիւն:

Տաֆտը նախագահութեան թեկնածու ընտրվեց 561 ձայնով, Րուզվէլտն ստացաւ 108 ձայն: 344 պատգամաւոր ձեռնպահ մնացին:

Րուզվէլտի կողմնակիցները դեռ երէկ գիշեր յայտարարեցին նրան Ամերիկայի նախագահի պաշտօնի համար անկախ թեկնածու:

Ֆէզ.—Գեներալ Դալբէէի զօրամասերը ընդհարվեցին բնիկների ցեղի հետ: Ֆրանսիացիք կորցրին սպանված 5, վիրաւորված 16 մարդ: Մարօկկօցիները յետ նահանջեցին:

Լիսաբօն.—Գործադուլները յարձակվեցին մի քանի անգամ էլեքտրաքարշի վրա: Ոստիկանութիւնը նրանց ցրելու ժամանակ գործադրեց հրազէն: Կան վիրաւորներ:

(Լրագիրներից)

Պետերբուրգ.—Պետական Դուման կովկասեան հարցապնդման առիթով այլ գործերին անցնելով ընդունեց հոկտեմբերեանների հետևեալ բանաձևը. «Ի նկատի առնելով՝ 1) որ քննված զեկուցման տւեալները երևան են հանում Թերեքի շրջանի տեղական իշխանութեան կատարեալ անկարողութիւնը ընդհանրապէս յանցագործ տարրերի և ի մասնաւորի աւազակախմբերի դէմ կռւելու գործում, 2) որ տւեալները մատնանշում են իշխանութեան մի քանի պաշտօնեաների զանցառութեանց վրա աւազակների յարձակումների նկատմամբ, 3) որ էկզէկուցիաների ընդունված ձևը գլխաւորապէս վնասում է խաղաղ աշխատաւոր ազգաբնակութեանը և համարեա թէ չէ տարածվում յանցագործ տարրերի վրա, 4) որ դրամական տուգանքների մեծ մասը, որոնք վերցված են վերջին տարիներս, կարելի է յափշտակված համարել, Պետական Դուման անհրաժեշտ է համարում սենատորական քննութիւն նշանակել Թերեքի շրջանի իշխանութեան վարչութեան գործունէութեան վրա, և կարծում է, որ երկրի յետագայ բարօրութեան և առաջադիմութեան համար պիտի գործադրվեն հետևեալ միջոցները. 1) Կուբանի և Թերեքի շրջանների անջատումը Կովկասի փոխարքայութիւնից, 2) Վերանորոգումն հարկաւոր դէպքերում տեղական իշխանութեան մարմինների և մասնաւորապէս ոստիկանութեան, 3) Կանոնաւորումն հողային յարաբերութիւնների, դատարանի, ժողովրդական լուսաւորութեան, գաղթականական գործի, 4) Ներմուծումն դրական բարենորոգումների, որոնք հիմնված կը լինեն ինքնավարութեան հիմունքների վրա, տեղական ազգաբնակութիւնը կոչելով սեփական գործերը վարելու, պահպանելով արդարացի վերաբերմունքը ազգերի կենսական շահերի վերաբերմամբ, համաձայն տեղական առանձնայատուկ պայմանների և 5) Կովկասի կառավարութեան գործը ենթարկել անմիջական կերպով մինիստրական խորհրդին»:
(«Кавк.»)

Պետերբուրգ.—«Н. В» թերթը ողջունում է Պետական Դումայի մասդրութիւնը Սև-ծովեան նահանգի անջատման նկատմամբ Կովկասեան Փոխարքայութիւնից, անհրաժեշտ համարելով զատել նաև Սուխումի շրջանը, որի բնիկները, աբխազները, համակրանքով են վերաբերվում դէպի ամեն ինչ, որ ռուսական է, որով ռուսական գաղթականութիւնը առաջ կերթայ:
(«Кавк.»)

«Кавказъ» լրագրին հեռագրում են Պետերբուրգից, որ Պետական Դումայի անդամների Բարձրագոյն և ողորմած ընդունելութիւնը այս անգամ տարբերվում էր նախկին տարիների ընդունելութիւնից նրանով, որ պատգամաւորութեան կազմի մէջ մտնում էին և օպպօզիցիայի շատ անդամներ:

Կովկասեան պատգամաւորներից Թագաւոր Կայսրին ներկայացան Հէյդարօվը, Սաղաթելեանը, Խասմամէդօվը, իշխան Շերվաշիձէն և Տիմօշկինը:

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
9 և 10 յունիսի

Մուկդէն.— Ապստամբութեանը մասնակցում էին բացառապէս հիւսիսային արուարձանում գտնվող կանոնաւոր զօրքերը: Անկարգութիւնները ճնշվեցին Զժանգցօլինի զօրքերի ձեռքով: Կալանաւորվածներից մի քանիսը գլխատվեցին: Չէքբակալութիւնները շարունակվում են: Հիւսիսային արուարձանում կողոպտվեցին բոլոր բանկերը, լօմբարդները, խոշոր ֆիրմաները: Հրդեհին ճարակ դարձան 300 տուն:

Կօբդօյից տեղեկացնում են, որ չին իշխանութիւնները սոսկալի տանջանքների են ենթարկել չինացիների դէմ ագիտացիա մղելու ուղարկված Տօրգօուտ Ուրմուրջաբին:

Կաշգար.—Բոլոր քաղաքներում, ուր տեղի ունեցան բանի յեղաշրջումներ, կատարվում են մահապատիժներ, բայց գլխատում են ոչ թէ խակական ոճրագործներին, այլ նոր կառավարութեանը անհաճելի մարդկանց:

Շանխայ. — Հօնգկօնգից անգլիական զօրքերը դիմեցին Կանտօն:

Մուկդէն. — Ապստամբները քարուքանդ արին մօտ 100 շինութիւններ: Լուրերի համաձայն՝ դրդիչները ծրագրել են զօրքերի միաժամանակ ապստամբութիւն: Զօրքերի մեծ մասը ռոճիկ չէ ստանում:

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 յունիսի

Կ. Պօլիս.—Պալատում 210 ձայնով 15-ի դիմաց ընդունվեց սահմանադրութեան փոփոխութիւնների մի մասը, որոնք արգասիք են կաբինէտի առաջարկած 35-րդ յօդուածի նոր խմբագրութեան:

Բրուսայի վիլայէթում, համաձայն պաշտօնական հաղորդագրութեան, Չէնգիլէր գիւղի հայերը ընդհարում են ունեցել դաղստանցի եկւորների հետ հողային վէճի ժամանակ: Սպանվել են 5 հայ և մի մահմեդական աղայ:

Հռոմ.—«Տրիբունան» հերքում է աւստրիական «Ցէյտի» տեղեկութիւնը, երբ իտալացիները վերցրել են Հօդէյդայի պաշարումը:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
9 և 10 յունիսի

Թաւրիզ.—Շահսէվանները կողոպտեցին Իրդիմուս գիւղը՝ Արդաբիլի մօտերը:

Բասմանջից Սերաբ շարժվեց կառավարական զօրամասը, թւով 1000 մարդ, Բէշիդ-ուլ-Միւլքի հրամանատարութեամբ: Առանց ռուսների աջակցութեան անկարգապահ զօրամասը հազիւ թէ յաղթէ շահսէվաններին և մտնէ Արդաբիլ, որովհետև, լուրերի համաձայն, շահսէվանները գրաւել են լեռնանցքների մօտերը՝ Սերաբի հաղորդակցութիւնը Արդաբիլի հետ կտրելու նպատակով:

Ահարից հաղորդում են, որ ի նկատի ունենալով Ահար-Թաւրիզ ճանապարհի վտանգը շահսէվանների կողմից, 200 ձիաւոր ուղարկվեցին Ահարից ճանապարհի պաշտպանութեան համար:

Նոյն տեղից հաղորդում են, որ կռիւ է տեղի ունեցել շահսէվան Խօջաբէկլու ցեղի և կառավարական ձիաւորների միջև, որի հետևանքում վերջինները նահանջել են դէպի Շահբուլդաղի գիւղը: Խօջաբէկլուցիները կողոպտել են Ջուլսա գիւղը:

Ուրմիա.—Ջիջանելով նահանգապետի և մեր հիւպատոսի պահանջներին, թիւրքաց հիւպատոսը նահանգապետին յանձնեց հէնց իրա՝ թիւրքաց հիւպատոսի կարգադրութեամբ կալանաւորված 4 հոգու:

Թէհրան.—Պօշտէկուխայի վալին մերժեց ապաստան տալ Պօշտեկուխայում Սալար-ուդ-Դօվլէի զօրքերի մնացորդներին, և կալանաւորելով Սալարի կողմնակիցներին՝ ուղարկեց նրանց Քիրմանշահ պրինց Ֆարման-Ֆարմային: Լուրերի համաձայն Սալար-ուդ-Դօվլէն վերադարձել է Աւրօման:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 3 յունիսի

Գլխաւորապէս Ատրպատականի նահանգական իշխանութեան միջին յուզողն ու զբաղեցնողը շահսէվանների ըմբոստ շարժումն է ամիսներից ի վեր: Կողոպտում ու ամայացնում են գիւղեր, դաշտեր անպատիժ: Սարսափելի են Աստարա-Արդաբիլ-Թաւրիզ ճանապարհները. ոչ մի ապահովութիւն: Մինչև անգամ շահսէվան ցեղերի հրոսակ ձիաւորները ձեռք մեկեցին ռուսահպատակների գիւղերը թալանելու և անհանգստացնելու: Գիւղացիք դիմեցին ռուսաց զէնքի պաշտպանութեանը: Ռուսները հարկադրված էին միջամտել ի պաշտպանութիւն հպատակների իրաւանց և յապահովութիւն Աստարա-Արդաբիլ ճանապարհի, որտեղ վնասներ էին ենթարկվում վաճառականների ապրանքները։

Շահսէվանների աւարառութիւններն ու յարձակումները մեծ չափեր ստացան. և՝ մի քանի օր առաջ՝ Սարաբի և Արդաբիլի մէջտեղում ընդհարվեցին ռուսաց զօրքի հետ, և, եթէ ճիշդ է լուրը, սպանեցին ռուսներից կօզակներ և զինուորներ, անհամեմատ զոհ տալով իրանցից։ Ռուսները կռւում էին մի թնդանօթով։ Շահսէվանների ձիաւորները հասել են Թաւրիզից 35 վերստ հեռու Շիբլի աւված վայրը։ Այսօր էգուց ռուս զինուորների հետ Սարաբ կուղևորվի Ատրպատականի զինուորական ընդհ. հրամանատար սարդար-ուլ-Բաշիդ-ուլ-Մուլքը։ Ասում են, թէ Խուդափերինի կողմից կամ Աստարայից մտնելու է ռուսաց մի զօրամաս։ Շահսէվանների՝ սահմանագլխի վրա կատարած անվերջ խռովութիւնները նոր չեն. հաւանականաբար եկած հասած է համարվում րօպէն, որ ռուսներից ստանան զօրաւոր հարուած և հանգիստ նստեն տեղները՝ առանց այլ ևս շփոթութիւններ յարուցանելու երկրի սահմանածայրում ի վնաս խաղաղ ժողովրդի։

Եփրեմ-խանի անցած տարվայ ձերբակալած և Թեհրան տարած կալանաւորները, ինչպէս յայտնի է, արդէն ազատ արձակվեցին. վերջիններս, ասում են, խառն են ապստամբական գործի մէջ և մեծ դեր ունեն տեղի ունեցող զինաշարժումներում։ Թէ ինչ նպատակով Թեհրանը ազատ արձակեց շահսէվան հրոսակների պետերին, դա ինքը Թեհրանն է իմանում. միայն անհաւանական չէ շատերի այն կարծիքը, թէ ազատեցին նրանց այն նպատակով, որ խառնեն Ատրպատականը, որ համեմատաբար հանգստութիւն է վայելում, և նահանգապետի գլուխը մատնեն խառնաշփոթութեան։

Կառավարութիւնը մի քանի օր առաջ 100 ձիաւոր ուղարկել էր. երևի մեծ գործ չը շինեցին։ Այս երկու օրում մի քանի հոգի վիրաւոր բերեցին Թաւրիզ։

Մինչև այսօր տակաւին որոշ չէ, թէ ինչ դիրք է բռնելու նահանգական իշխանութիւնը Մաշրութէի կուսակցականների նկատմամբ, մանաւանդ նրանց, որոնք դեկտեմբերեան անցքերին մասնակցելու ամբաստանութեան տակ են։ Օսմանցոց հիւպատոսարանում ապաստանողները—3 հայ և մի քանի թուրքեր—մնում են դեռ ևս, չը վստահելով դուրս գալ։ Կախաղանի սիւները կանգուն են։ 15 օր առաջ Շուջա-ուդ-Դովլէի հրամանով ձերբակալվեց Թաւրիզեցի մի հայ դերձակ՝ Պետրոս անունով։ Յետոյ իմացվեց, որ ինչ-որ գիշերային գումարումներ են տեղի ունեցել, և նահանգապետի մասին անհաճոյ կարծիքներ յայտնվել։ Շնորհիւ ազա Ջ. Նազարբէկեանի ազատվեց դերձակը թէև, սակայն երկու օր ժամանակամիջոցից յետոյ քշեցին Թաւրիզից անպայման ժամանակով։

Սօուջ-Բուլաղում հաստատվեց ռուսաց հիւպատոսութիւն։ Հայկազուն

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պոլիս, 31 մայիս

Այսօր Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի հրաւէրով զանազան խմբակցութեանց ներկայացուցիչները հաւաքուելով ազգային ժողովի՝ աշխատութիւնները դիւրացնելու և արդիւնաւորելու համար խորհրդակցութիւն կատարեցին։ Այս հրաւէրին չէին պատասխանած դաշնակցականներէն Վարդգէս և Վահան Փափազեան, ինչպէս նաև ազատականները, որով կարելի չեղաւ շատ որոշ եզրակացութեան մը գալ, և մամուլին պարզ զեկոյց մը հրատարակութեան տալով բաւականացան։ Ասով մայր-դիւանը փափաք կը յայտնէ ժողովները մեծամասնութեամբ գումարելու և ճիշդ որոշեալ ժամուն սկսելու և վիճաբանութիւնները կանոնաւորութեամբ շարունակելու և այլն։

Ասոնք բաղձանքներ են, որոնք չենք գիտեր թէ որքան պիտի արդիւնաւորուին, սակայն ցոյց կուտան, թէ դիւանի գլուխը եթէ գտնուի կարող ույժ մը, կրնայ անիկա կատարել դեր մը և ոչ թէ չէզոք հանդիսատեսը ըլլալ կատարուած անցուդարձերուն և ամուլ վէճերուն։

Այս տեսակէտով Նորատունկեան, կրնամ ըսել թէ, միակ մարդն է, որ կրնայ օգտակար ընծայել իր պաշտօնավարութիւնը, եթէ իրեն օժանդակեն ազգ. երեսփոխանները։

Ազգային գործոց ընդհանուր վիճակին համար ալ հոգածու՝ Նորատունկեան կուզէ, որ անոնք ալ առարկայ չըլլան խծբծանքի ու սաստիկ քննադատութեան։

Ինքը կը մտածէ, թէ Արշարունի պատրիարք իր բոլոր թերութիւններով շատ մը ուրիշներէ նախամեծար է, և կուզէ, որ անոր դիրքը պահպանուի և ույժ ու կորով ներշնչուի, միանգամայն ցոյց տրուելով անոր իր սրբագրութեան կարօտ թերութիւնները և պակասութիւնները։ Այս նպատակով հաւանական է, որ քանի մը օրէն մասնաւոր պատուիրակութիւն մը, կեդրոնին անդամներէն բաղկացեալ, ներկայանայ պատրիարքին և իր տեսութիւնները պարզէ անոր։

Վերջերս կովկասահայոց բաւական ծանօթ Արամ Անտոնեանի խմբագրութեամբ հրատարակուած «Մանզումէ» թերթը տգեղ ու գռեհիկ պայքար մը բացած է Արշարունի սրբազանի դէմ։ Այս յօդուածները պատրիարքը կը ձլատեն ինքն իր մէջ՝ զինքն յուսահատութեան՝ մատնելով և միւս կողմէն կը վնասեն անոր դիրքին և կը վարկաբեկեն զինքը կառավարութեան առջև։

Այս քննադատութիւններուն տխուր հետևանքները նկատի առնելով, փափաք կայ կարգ մը շրջանակներու մէջ կոչ ընել մամուլին ազգասիրական զգացումներուն և վերջ տալ այս անիմաստ, վնասակար ու քանդող պայքարին, որուն թագուն շարժառիթներ ալ վերագրողներ պակաս չեն։

«Մանզումէի» հրատարակութիւնները արդէն շատ տխուր կազդեն ամեն հայու վրայ։ Այս անխիղճ պայքարը բանալով, կը յուսայ այդ թերթը իրեն համար տեղ մը շինել, սակայն ընդհակառակը օրէ-օր աւելի կորսնցնելու և նսեմանալու կը միտի։

Այս թերթը արդէն կօմիտէին ի նպաստ պրօպագանդ ընելու համար վերստին հրատարակելու արտօնուեցաւ՝ իր արտօնութիւնը իսպառ ջնջուելէն յետոյ։

Կօմիտէն մինչև ընտրական պայքարին մէջ իրեն յատկացուցած էր որոշ գումար մը, որ ընտրական պայքարին վերջանալէն յետոյ պլացուեցաւ։ Հիմա թերթը կը կաղայ, ուստի բաղդախնդիր ու հակաժողովրդական ուղղութեան մը յարած է և ասով կը յուսայ ապահովել նոր հասոյթներ, որոնք սակայն կը խուսափին։

Ժողովուրդին գռեհիկ միտումները շահագործելու ձեռնարկ մըն է պատրիարքին վրա եղած յարձակումը, որ սակայն լաւ ընդունելութիւն չգտաւ։

Այս ազգավնաս և քանդող գործունէութեան դէմ ահա կուզուի պատուար մը քաշել։

Ազգային շրջանակի մէջ ասոնք ամենը ցոյց կուտան, թէ քիչ ու շատ ոգևորութիւն և եռանդ ստեղծելու ջանքեր կըլլան, մինչ ամառուան եղանակին առաջին մեղկացումներն ընդհակառակն միւս կողմէն շատերը գործօն կեանքէ կը հեռացնեն։

Խառն ժողովը իր նիստերը շատ մեծ դժուարութեամբ կը գումարէ։ Յաճախ մեծամասնութիւն չկայ։

Ազգ. ժողովին օրակարգին վրայ է քաղ. ժողովի պակասեալ երեք անդամներուն ընտրութիւնը, որ պիտի կատարուի հաւանօրէն այսօր։ Քաղ. ժողովը կը կարօտի ուժեղ տարրերու, և չենք գիտեր, թէ որոնք պիտի ընտրուին քաղ. ժողովի կազմը ուժեղացնելու համար։ Շառայլ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 28 մայիսի

Վերջին օրերում մի մեծ ընդհարում պատահեց շամսիկցի աշիրէթի պետերից Սաղուն-բէյի ու ավդօցիների միջև, գլխաւորութեամբ Սմկօյի, որին ընկերանում էր նաև Միր-Մհէն։ Նախայարձակումը եղաւ շամսիկցիների կողմից՝ թալան բերելու նպատակով. կռիւը սկսվեց երկուստեք, և շամսիկցիներին միացան նաև սահմանապահ զօրքերը, որոնցից եղան 2 սպանված, 5 վիրաւոր և 2 գերի. շամսիկցիներից եղան 2 սպանված, 1 վիրաւոր, իսկ ավդօցիներից 3 սպանված և 2 վիրաւոր, որոնք էին բուն իսկ Սմկօն և նրա հօրեղբօրորդի Ջիհանկիրը. սա մի քանի օրից յետոյ մեռել է. սրանցից գերի տարված մէկ ձիաւոր քիւրդ էլ այրել են Կրդօլում։

Այս դէպքը անշուշտ անհետևանք չէ մնում, որովհետև ավդօցիները անպատրաստ են եղել և զոհ գնացել յանկարծական գրոհի։

Յարձակվողների հետ գտնվում էր, ինչպէս հաւաստում են, նաև յայտնի Շարաֆ-բէյը, մազրեկցի ցեղապետ՝ 80 ձիաւորներով. շամսիկցիներն էլ ունեցել են 170 ձիաւոր, որոնց դէմ Սմկօն հազիւ ճակատեցրել է 50։ Մորակ

ԹԻՒՐՔԻԱՅԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ ԵՒ ՆԵՐԿԱՅՈՒՄ

Նախ մտքով թռիչք մը գործենք ասկէ մօտ 10 տարի առաջ, քննական հայեացք մը նետելու Թիւրքիայի ընտանեկան կեանքի վրայ, գաղափար կազմելու այդ երկրի յառաջդիմութեան գրաւականներու մասին։

Տասն տարի առաջ՝ Վանի ընտանիքներն իրենց յետամնաց գաղափարներով, տգիտութեամբ, նախապաշարումներով, կոպիտ շարժումներով աչքի կիյնային առաջին իսկ տեսքով։

Նոյնանման յատկութիւններով օժտուած ընտանիքները չէին կարող նկատել այդ բանը, քանի որ ընդհանուր կազմը շաղախուած էր նոյն տղմին մէջ։

Բացառութիւն չէին կազմեր և տղամարդիկ. ո՛չ մէկը մտածելու առիթ կուտար իր ուղեղին՝ փոխելու կեանքի ձևը, տարբեր ուղղութեամբ, դէպի բարելաւում, դէպի մարդկային կատարելութեան անյողդողդ իրագործում։

Տկար սեռը ա՛լ աւելի ստորնացած ու զուրկ էր կեանքի ամենատարրական վայելքներէն. աղջկան նամանաւանդ՝ իսպառ արգիլուած էր խօսիլ, մինչև անգամ այն նիւթի մասին, որ թէև կարող էր կապ ունենալ իր անձնաւորութեան հետ։ Այդ պարագային անգամ՝ աղջիկն ստիպուած էր հպատակիլ տղամարդկանց որոշումին, տանիլ ամեն տեսակ ցած վիրաւորանք։ Հայ օրիորդը չէր կրնար բաց երեսով դուրս գալ տղամարդու կամ հասարակութեան առաջ, պէտք է քօղարկէր երեսն այնքան, որ իր ճամբան իսկ չտեսնէր, հակառակ պարագային՝ մեղք ու ամօթ համարուելով հանդերձ՝ կը դառնար պախարակուելու, քննադատուելու, բամբասանքի առարկայ հասարակութեան համար։

Անոնց մէջ արմատացած թիւր հասկացողութիւնը արմատախիլ ընելու համար շա՛տ ույժ էր հարկաւոր, կամքի տոկունութիւն, որպէսզի դիւրին ըլլար ճահճային աշխարհէն վեր բարձրացնել մամռոտած հասարակութիւնը, որպէսզի արևի ճառագայթներուն մատչելի դառնար լուսաւորուելու գէթ աղօտ լոյսով։

Ի՞նչ էր ըրած հայ ընտանիքներն այդ խաւար դարուն մէջ։ Ըսենք որ՝ ոչինչ։

Բռնապետական արիւնոտ մթնոլորտին մէջ ապրող ընտանիքները, ահ ու սարսափի քաղաքականութեան տակ մեծցած, չեն կարողացեր նուազագոյն չափով ճաշակել գիտութեան պտուղները, զգալ ազնուացման պահանջը։

Ի՛նչպէս պէտք էր բարեփոխել ընտանեկան այդ ձևը, երբ կին արարածը չունէր մանկավարժական ոևէ լուրջ մեթոդ իր զաւակները դաստիարակելու։ Չէր կարելի ազատել զաւակները ընտանեկան նախապաշարումներու խմորումէն, երբ ծնողներու մէջ միս ու արիւն էր դարձած ճնշելու, հպատակեցնելու հասկացողութիւնը, երբ ընտանիքները շրջապատուած էին անձաւներով և չունէին գէթ նեղ շաւիղ մը, որ դէպի ժամանակակից հասկացողութիւններն առաջնորդէր։

Այդ ընտանիքներն իրենց արտաքինով շլացուցեր են շատ շատերը, բայց հիասթափութիւնն արդէն զօրեղ կերպով ներգործեր է այդ զոհերու վրայ, երբ տեսեր են, որ այդ փայլուն ու գրաւիչ կանանչով պատած լճակներու մէջ գորտեր են եղեր, տիղմը, անդունդը։

Ընտանեկան յարկի տակ անպակաս են եղած վէճ, խռովութիւն և ամեն ինչ... ամուսնական կեանքը յաճախ կանցնի երկպառակութեամբ, երբ ծնողներն, իբրև բռնակալներ, կը ստիպեն իրենց զաւակները ամուսնանալ այս կամ այն աղջկան կամ երիտասարդին հետ, իրենց շահադիտական նպատակներն իրականացնելու համար, առանց լրջօրէն մտածելու իրենց զաւակներուն ապագայ կեանքին նկատմամբ իրենց կատարած տնօրինութիւններու ծանր հետևանքներուն մասին։

Այսօր ալ շատ ընտանիքներու մէջ գոյութիւն ունի այդ գաղափարը։

Նոր կազմուած ընտանիքները մասամբ մէկդի են ձգած արգահատանքի առարկայ եղող ամեն մի հին հասկացողութիւն և կը հետևին նոր գաղափարի հոսանքին։

Դա անցեալն էր, այո՛, մութը ճակտին անցեալը, որ իր վրայ բարդած էր ամբողջ ազգի ծանր հոգը, դարձած՝ անոր համար մի անդունդ, ձգած՝ ազգն անշարժութեան ու մեռելութեան տղմին մէջ։

Վէրքն անբուժելի էր. լոյս էր պէտք՝ փարատելու համար տիրող խաւարը. նոր միտք էր հարկաւոր՝ արթնցնելու թմրած ուղեղները։ Երբ պահանջ կայ ազգի լուսաւորութեան մասին մտածելու, ակներև է, որ ճահիճը խառնելն ահագին աղմուկ ու ժխոր էր բարձրացնելու, որ քնացած հասարակութիւնը պատրաստ է իր դժոխային զէնքերով հալածելու ամեն մի նոր գաղափար քարոզողին։

Այսօր այդ մշուշը մակերևութօրէն կարելի է ցրուած համարել. պատմութեան անիւը տարբեր ուղղութիւն տուաւ ընտանեկան կազմին, կեանքի ընթացքը ուրիշ գծով շարժեցաւ ու երկու ազգերու առջև ալ բացաւ քաղաքակրթութեան հարթ ճամբան. այսօր ընտանիքները կընթանան բարեշրջման օրէնքով դէպի անհամեմատ կատարելութիւն։

Թէպէտև ընտանիքներու մեծագոյն տոկոսը դարձեալ հին ձևն ու սովորութիւնն ունի, սակայն կը տեսնուի անոնց մէջ որոշ հետաքրքրութիւն ու եռանդ իւրաքանչիւր նոր բանի։ Աներկբայ է, որ ատոնցմէ լաւ բան սպասելու յոյսն ի զուր չի անցնիր։ Երբ գէթ մասամբ վերացուած են այն խիստ միջոցները, որոնք դեռ մինչև մօտաւոր անցեալը գոյութիւն ունէին մեր ընտանեկան յարկի տակ մեր զաւակներու յառաջդիմութիւնը արգիլելու կամ կասեցնելու ուսման գործի մէջ, ուրեմն հիմակուընէ կրնանք ըսել, որ ապագան յուսալի է մեզ համար, ժպտուն, վարդագոյն ու լուսաւոր։ Վանանոյշ Զըւանդեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս հաղորդեցինք, կիրակի, յունիսի 10-ին, Վանքի, Մողնու և Բեթղեհէմի եկեղեցիներում նշանակված էր Յովնանեան-Մարիամեան օրիորդական դպրոցի հոգաբարձական պատուիրակների ընտրութիւնը։

Մենք առիթ ունեցանք յայտնելու, որ պատուիրակների ընտրութիւնը անյաջող ժամանակ է նշանակված, որովհետև ամառվայ պատճառով ծխականներից շատերը հեռացել են քաղաքից։

Սակայն և այնպէս, որովհետև պայքար կար երկու կուսակցութիւնների (առաջադիմականների և հօրիզօնական-թայֆայականների միջև), դարձեալ երեք եկեղեցիներում բաւական թւով ծխականներ էին հաւաքվել։

Վանքի մայր եկեղեցում հաւաքվել էին մօտ 110 ծխականներ։ Երբ աւագ քահանայ տէր-Եղիկը բացեց ժողովը և առաջարկեց ընտրել նախագահ, առաջարկվեցին Ա. Բաբեան և Լ. Տիգրանեան։ Յօգուտ Բաբեանի (առաջադիմականների կանդիդատի) ձեռք բարձրացրին 83 հոգի։ Թայֆայականները տեսնելով, որ իրանք փոքրամասնութիւն են կազմում, սկսում են աղմուկ հանել, և տեղի է ունենում մի ցաւալի դէպք։ Այդ տգեղ միջադէպի պատճառով ժողովը փակվում է։ Պարզ է, որ այդտեղ մեծամասնութիւնը, և ճնշող մեծամասնութիւնը, առաջադիմականների կողմն էր, քանի որ նրանք 83 ձայն ունէին։

Մողնու եկեղեցում մեծամասնութիւնը թայֆայականների կողմն էր, շնորհիւ այն հանգամանքի, որ դարձեալ տէր-Վարդան քահանայ Տէր-Ղևոնդեանի կազմած ծխացուցակով մօտ 50 հոգի մասնակցում էին ապօրէն կերպով։ Տէր-Վարդանը իր ծխականների ցուցակը ներկայացրել է Եփրեմ եպիսկոպոսին անցեալ 1911 թ. օգոստոսի 11-ին և այդ ցուցակի մէջ կան մօտ 50 անձինք, որոնք ծխական են ճանաչվել ուրեմն 1911 թ. օգոստոսին։ Հետևաբար, այդ 50 հոգին համաձայն ծխական կանոնադրութեան և Փոխարքայի հրատարակած կանոնների, իրաւունք չունեն մասնակցել ժողովին, քանի որ 2 տարի ծխական չեն եղել։ Դա արդէն յայտնի խախտումն է կանոնների և հրահանգի։

Ծխականներից Հ. Առաքելեան յայտնեց այս խախտումը և պահանջեց, որ նրա այս յայտարարութիւնը մտցնվի արձանագրութեան մէջ՝ բողոք տալու համար։

Երբ նախագահ ընտրվեց ձայների մեծամասնութեամբ (76 ձայնով ընդդէմ 46-ի) Ստեփան Լիսիցեանը, ժողովականների մի մասը հեռացաւ և չը մնաց քուէարկութեան։ Մնացածները շարունակելով, ընտրեցին պատուիրակներ պ. պ. Տ. Թադէոսեանին, Ե. Կաճկաճեանին, Գ. Կաֆեանին և Նիկ. Տէր-Ղևոնդեանին։

Բեթղեհէմի եկեղեցում պատուիրակներ ընտրվեցին Բարսեղ Աւանեան, Ոսկանեան, Գարեգին Տէր-Ստեփանեան և բժշկ. Բ. Նաւասարդեան։

—

Յովնանեան դպրոցի հոգաբարձութեան ընտրութեան առիթով մեզ հաղորդում են, որ «Հօրիզօնի» կիրակի օրվայ համարում տպված մի քանի յօդուածների մէջ գիտաւորեալ խեղաթիւրումներ և աղաւաղումներ են թոյլ տուած, նոյն իսկ ակնյայտնի ստութիւններ։ Հոգաբարձու Նիկողայոս Անանեանի բերանից արված յայտարարութիւնները նոյնպէս ստութիւններ են և արդիւնք այն հանգամանքի, որ Ն. Անանեան զայրացած է ներկայ հոգաբարձութեան դէմ, որ որոշել է նրա եղբայր՝ քարվանսարայի կառավարիչ Մ. Անանեանի ռոճիկը 1200 ր. իջեցնել 600-ի, քանի որ այդ պաշտօնը ուղղակի սինեկուրիա է և դպրոցն ուղղակի տուժում է։ Նոյն և կորած մօտ 200 գրքերի մասին հաստատ իրողութիւն է, որ այդ գրքերը ներկայ հոգաբարձութեան օրով չեն կորել, այլ նախորդների։

Որ Անանեան տոհմի ներկայացուցիչ Ն. Անանեանը տգեղ դեր է կատարում ուղղակի իր եղբօր պատճառով, դա ակնյայտնի փաստ է։

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՒՏՔԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Պետերբուրգ, 4 յունիսի

Պետերբուրգի հայ գաղութը արդէն օրեր առաջ սպասում էր Վեհ. Հայրապետի գալստեան։

Տեղիս հայ եկեղեցական խորհուրդն ամեն մի միջոց ձեռք առաւ հնար եղածին չափ հանդիսաւոր կերպով ընդունելու Վեհին։

Եկեղեցական խորհուրդը քաղաքի ամենալաւ մասում, կայսերական պալատին կից, վարձել էր Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլօվնայի պալատը, որպէս հայրապետական իջևան։ Եկեղեցական խորհուրդը իր ներկայացուցչին—խորհրդի անդամ գեներալ Յ. Բաղրամեան—ուղարկել էր Մօսկվա՝ այնտեղ դիմաւորելու Վեհին։

Վեհափառ Կաթողիկոսը Մօսկվայի կայարանում հինգ ժամ մնալուց ու հիւրասիրվելուց յետոյ, ուղիղ երեկոյեան ժ. $8^1/_2$-ին մեկնում է արագընթաց գնացքով Պետերբուրգ։ Մօսկվայի հայ գաղութի կողմից իբրև պատգամաւոր կայարանում դիմաւորում և միանում են Վեհի շքախմբին Ստ. Մամիկոնեան և Արսէն Բուդաղեան։

Յունիսի 2-ին, շաբաթ օրը, մայրաքաղաքի թերթերում յայտարարվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի ժամանելու լուրը։

Կիրակի առաւօտեան ժ. $8^1/_2$-ին գնացքը հասաւ Նիկօլայևսկի կայարանը։

Հայ երկսեռ խուռն հասարակութիւնը սպասում էր կայարանում. ընդառաջ էին եկել եկեղեց. խորհրդի բոլոր անդամները. աչքի էին ընկնում դիմաւորող հասարակութեան մէջ՝ պրոֆ. Վարդանեան, Ն. Ադոնց, իսկակ. գաղտ. խորհրդական Արղութեան-Երկայնաբազուկ, իսկակ. գաղտ. խորհրդական Գր. Տիգրանեան, Պետ. Խորհրդի անդամ Պ. Ղուկասեան, Սիրական Տիգրանեան, Դ. Ասրիէքեան, Ար. Բուդաղեան, Սուլթանշահ և այլք։

Վեհը իր շքախմբով դուրս եկաւ վագոնից։ Սկսվեց թափօրը։ Առաջից գնում էին ծիրանազգեստ և սպիտակ փափախներով չաթիրները, որոնց հետևում էին՝ խաչակիր դրօշակներ ձեռքներին՝ երկու քահանայ, իսկ հետևում էին Վեհին՝ Ներսէս արքեպ., Մեսրոպ ու Խորէն եպիսկոպոսները և Բագրատ ու Մատթէոս վարդապետները։ Թափօրը լրացնում էր հասարակութեան խուռն բազմութիւնը։

Կայարանում թափօրը կանգ առաւ Կաթողիկոսին ընդունելու համար կայսերական մեծ դահլիճում։ Վեհափառը բազմեց իր տեղում, լսելու հայ գաղութի ողջոյնները։

Պրօֆ. Վարդանեանը, իբրև նախագահ եկեղեցական խորհրդի, ասաց հետևեալը.

«Վեհափառ Հայրապետ։ Բաղդը պարտք ունեմ տեղիս եկեղեցական հաստատութեան կողմից ողջունելու Ձերդ Սրբութեան՝ եկեղեցու Պետի բարի գալուստը մայրաքաղաք։

«Էջմիածին Գահակալի, ս. Լուսաւորչի Յաջորդի երևալը մեր մէջ իրօք մի ուրախաբեր տօն է հեռաւորնակ հօգևոր զաւակներիդ համար։ Հայ Կաթողիկոսի անունը եղել է և է սրբազան ու թանգ հայ սրտերում, քանի որ հայ եկեղեցին դեռ ևս մնում է նոյն հինաւուրց ճշմարտութեան ապաւէնն այն հայութեան, որ տակաւին չէ դադարել տանջվելուց յանուն արժանավայել կացութեան, այն հայութեան, որ ուզում է իր անցեալի քաղաքակրթական դրոշմը պահպանել ու վսեմացնել նոր լուսաւորութեան, նոր ժամանակների խիստ պահանջներով։

«Հայ ժողովուրդը միշտ սիրել է իր հայրապետներին պատկառանքի վեհութեամբ ու միշտ տեսել է ի դէմս նրանց իսկական քաջ ու արթուն հովիւներ, որոնց անձը կատարելապէս նուիրված է եղել, հնուց ի վեր, իրանց հօտի բարօրութեան, նրանց ցաւերին և յոյսերին։ Նոյն վեհ յարգանքը, նոյն ջերմագին սէրն է, որ ահաւասիկ բոլորիս բերել խառնել է Նորընտիր Հովուապետիդ առաջ. անհուն բերկրութեամբ, լիառատ սրտով, հայրենի յիշատակներին կարօտ պանդուխտի ծարաւով հայցում ենք հայրական բարձր օրհնութիւնդ, ակնածութեամբ մօտենում ենք ի համբոյր սրբազան աջիդ և մաղթում, որ կարող աջդ հովանի լինի երկար և երջանիկ օրով հայ եկեղեցուն, համայն հայութեանդ»։

Ապա խօսեց տեղիս հայոց ակումբի նախագահ Գր. Տիգրանեան՝ մայրաքաղաքի հայ գաղութի կողմից ողջունելով Վեհի մուտքը Պետերբուրգ։

Վեհը օրհնելով ճառախօսներին ու հասարակութեան՝ կառք նստեց և Նևսկի պրօսպէկտով դիմեց դէպի հայոց եկեղեցին։

Եկեղեցու բակում, ծիրանի փռուածքը երկու կողմից շրջապատած, ծաղիկները ձեռքներին սպասում էր մանուկների, ուսանողների և ապա հաւաքաւոր ժողովրդի խայտաբղէտ բազմութիւնը. եկեղեցու դռան մօտ, աստիճանների վրա, նշանաւոր հայերից 4 հոգի բռնած ունէին կաթողիկոսական ամպհովանին. դռան մէջտեղում կանգնած էին Բեսսարաբիայի թեմակալ-առաջնորդը և տեղիս աւագ-քահանան։

Երբ Վեհին ուղեկցող կառքերը մօտեցան եկեղեցուն, սկսվեց եկեղեցու զանգերի ղօղանջիւնը, որ երկար շարունակվեց։

Վեհը դուրս եկաւ կառքից, թեմակալը իր շքով, կաթողիկոսական ամպհովանիով, խաչ ու խաչվառով, երգեցիկ խմբով ընդառաջ գնաց Վեհ. Կաթողիկոսին։ Վեհը խաչակնքելով բազմութիւնը՝ առաջ անցաւ։ Հնչեց «Հրաշափառ» շարականը, և թափօրը երգելով, ծաղիկներ փռելով Վեհի առաջ՝ մտաւ եկեղեցի։

Սկսվեց առաւօտեան ժամերգութիւնը։ Վեհափառ Հայրապետը աղօթելուց յետոյ մեկնեց իր օթևանը։ Մօտ ժամ ու կէս հանգստանալուց յետոյ, վերադարձաւ եկեղեցի, ներկայ լինելու պատարագին։

Պատարագիչն էր Մեսրոպ եպիսկոպոսը։

Ընդունված կարգով, պատարագի միջում, «Հայր-մերից» առաջ Վեհափառը դիմեց ժողովրդին մօտաւորապէս այս բովանդակութեամբ.

«Սիրելի հայ ժողովուրդ. Մայր Աթոռի ողջոյնն եմ բերում ձեզ։ Թանգ պէտք է լինի ձեզ համար Մայր Աթոռի ողջոյնը։ Դու, Պետերբուրգի հայ գաղութ, որ կտրված ես մայր հողից, պարտաւոր ես սիրել Մայր-Աթոռը, Էջմիածինը, ինչպէս հարազատ զաւակը իր ծնողին։ Էջմիածինը շատ բան է արել հայ ժողովրդին, նա պահել է շատ հաստատութիւններ, կրթական հիմնարկութիւններ, որ այնքան օգտակար են եղել հայ ժողովրդին։ Ճեմարանը տուել է արժանաւոր ուսուցիչներ, պատուարժան քահանաներ, վարդապետներ և արժանաւոր քաղաքացիներ։ Էջմիածինը գտնվելով Արարատեան դաշտում, մայր երկրի կենտրոնում, լուսաւոր փարոս է եղել հայութեան համար, հաւաքել ու գուրգուրել է իր ծոցում իր խեղճ զաւակներին, թշուառ ու տառապալից րօպէներին։ Թէև Մայր-Աթոռը անպաճոյճ է արտաքուստ, բայց ներքուստ նա գրաւել է և գրաւում է ոչ միայն հայ գիտնականներին, այլև բազմաթիւ օտար ճանապարհորդներին, որոնք գտնում են այստեղ շատ ու շատ արժէքաւոր, պատմական յիշատակարաններ, հնութեան բեկորներ, գեղարուեստ, գրականութեան ճոխ արտադրութիւններ, սքանչելի կերտուածներ, և ամեն անգամ դիտելիս՝ հիացմունքի զգացմունքն է, որ տիրում է նրանց սրտերին։ Մենք ևս, Մայր-Աթոռի իսկական զաւակներս, պէտք է գիտենանք ու գնահատենք նրա նշանակութիւնը. Նա մեզ համար պէտք է լինի նուիրական ուխտատեղի, որի ամեն մի քայլը մեզ համար սրբութիւն է դառնալու։ Յիշեցէք խորայէլացոց պատմութիւնը. Երուսաղէմի տաճարը Աբրահամի զաւակների համար անբաժան ու անքակտելի սրբութիւն էր. գերութեան մէջ անգամ, իւրաքանչիւր խորայէլացի ախ ու վախ էր քաշում տաճարի անունը յիշելիս. նա չը կարողացաւ մոռանալ այդ աւերեալ տաճարը և նորոգեց վերստին. ձեզ համար մթէ չէ կրկնվում նոյն պատմութիւնը, և դուք պարտաւոր էք ուխտատեղի դարձնել Մայր Աթոռը և ամեն տարի ձեր ընտանիքներով, սիրասուն զաւակներով համբոյրներ տալով՝ ուրախ սրտով, վառ հոգով ուխտի գնալ Էջմիածին, տեսնել Մայր Աթոռը, պատմական սրբավայրերը և ծանօթանալ նրա կարիքների հետ։ Աթոռը պէտք է դէպի ինքը ձգէ երկրագնդի զանազան անկիւններում ցրված հայութիւնը, լուսաւորէ ու դաստիարակէ նրանց հայ ոգով, հայ գիտութեամբ ու հաւատով. դուք ևս, հայ ժողովուրդ, ամբողջութեամբ, ձեռք-ձեռքի տուած, օգնեցէք Մայր Աթոռին՝ կատարելու իր այդ լուսաւոր գերը. ինչ քան է մեզ իբրև մի ժողովրդի ամենից անհրաժեշտը, եթէ ոչ ուսումը. սիրեցէք ուսումը. նա է մեր փրկութիւնը. ուսում, ուսում և ուսում։ Ձեզանից ամեն մէկը կարող է և պարտաւոր է իր կարողութեան համաձայն օգնել Մայր Աթոռին, խելացի խօսքով, համեստ խորհրդով և նիւթական օժանդակութեամբ։ Մեր հարուստները միայն վերջերս սկսեցին նիւթական զոհաբերութիւններ անել յօգուտ կրթական գործի. ցանկալի էր, որ այդ նուիրաբերութիւններն առատանային և յարմարութիւն տրվէր առաջ տանելու կրթական գործն իր անսայթաք ճանապարհով։ Ձեր ճառերով ու դիմումներով ծանր պարտաւորութիւններ դրեցիք ինձ վրա ազգի ցաւերի հոգատար լինել. լաւ իմացած եղէք, որ մի ձեռքը ծափ չի տայ. ես մենակ մի մարդ ուզենամ էլ՝ ցանկացած արդիւնքը չեմ կարող տալ. օգնեցէք, և մենք միասին, հոգով միացած առաջ ընթանանք մեր պարտականութիւնների ճշմարիտ շաւղով։ Օրհնում եմ Թագաւոր Կայսրին, Կայսերական Ընտանիքը, Նրա զօրքն ու ժողովուրդը։ Վերջին անգամ օրհնում եմ հայրապետական օրհնութեամբ ձեզ, իմ սիրելի ժողովուրդ. Թող Աստուած ձեզ ույժ և կարողութիւն տայ ձեր պարտքը կատարելու»։

Պատարագի վերջը տեղի ունեցաւ կայսերական մաղթանք, որից յետոյ Վեհափառը մեկնեց իր օթևանը։

Ժամը 3-ին տրվեց հիւրերին նախաճաշ, որի ժամանակ մի շարք բարեմաղթութիւններ ու ճառեր արտասանվեցին։

Դ. Դերենիկեան

ՄԻ ՀԱՄԵՍՏ ԿՏԱԿ

Հանգուցեալ բարերար տիկ. Նունէ Գրիգորեան Տէր-Ղազարեանցը 1908 թ. թողել էր մի կտակ յանուն Կ. Հ. Բ. Ընկ., որը, Ընկ. խորհուրդը բանալով նրա մահվանից յետոյ, երևաց, որ հանգուցեալը թողել է մի պատկառելի գումար հետևեալ նպատակների համար։

ա) 3000 րուբլի իբրև անձեռնմխելի գումար յատկացնել Շամքոռեցոց ս. Գէորգ եկեղեցուն, որը գտնվում է 7-րդ քաղաքամասում, որի բակում պէտք է թաղել կտակարարին սեփական գերեզմանոցում իր հանգուցեալ ամուսնու կողքին և այդ գումարի ⁰/₀-ը ծախսել կարիքի համեմատ եկեղեցու վերանորոգութեան համար։

բ) 2000 ր. յատկացնել որպէս անձեռնմխելի գումար նոյն Շամքոռեցոց եկեղեցու և նրա ⁰/₀-ը իւրաքանչիւր տարի տալ նոյն եկեղեցու քահանաներին հաւասարապէս հոգեհանգիստ կատարելու կտակարարի և Տէր-Ղազարեանի տոհմի հանգուցեալ արանց համար։

գ) 5000 ր. տալ Կ. Հ. Բ. Ընկ. այն պայմանով, որ այդ գումարի ⁰/₀-ը ծախսվեն, ըստ հայեցողութեան Ընկ., Թիֆլիսում չքաւոր ստիպենդիանտներ պահելու յանուն իր որդի Գրիգոր Տէր-Ղազարեանի։

դ) 3000 ր. տալ Հայոց Դրամատ. Ընկ., Թիֆլիսում թատրոնական շէնքի կառուցման ֆոնդ կազմելու համար։

ե) 2000 ր. ծախսել Շամքոռեցոց եկեղեցու աւագ դրան շինութեան համար, այն պայմանով, որ շինութիւնը կատարվի կտակատարների և հոգաբարձութեան հսկողութեամբ։

զ) 500 ր. տալ Շամքոռեցոց եկեղեցու ծխական դպրոցի ընդհանուր կարիքների համար։

է) 1000 ր. տալ Համազասպ Տէր-Յովհաննիսեան քահանային։

ը) 500 ր. տալ Թիֆլիսի ս. Ստեփաննոս Կուսանաց վանքի ընդհանուր կարիքների համար։

թ) 500 ր. տալ Հայուհեաց Բարեգործական Ընկ. ընդհանուր կարիքների համար։

ժ) 2000 ր. տալ Թիֆլիս քաղաքում առաջին բացվող համալսարանին կամ այլ բարձրագոյն դպրոցին։

ժա) 300 ր. տալ անչափահասների ուղղիչ հողագործական արհեստաւորաց գաղութին և պրիւտին Ձեմօ-Աւճալայում նոյն գաղութի միջոցները ուժեղացնելու համար։

Վերոյիշեալ կտակի իրագործման համար կտակակատարներ նշանակված են Կ. Հ. Բ. Ընկ. խորհրդի նախագահ Ս. Յարութիւնեանը, Միք. Աթաբէգեանը և Ն. Խաչիկեանը։

Ե. ԳՈԳԵԲԱՇՎԻԼԻԻ ԹԱՂՄԱՆ ՀԱՆԴԷՍԸ

Կիրակի, յունիսի 10-ին, Թիֆլիսում տեղի ունեցաւ վրաց նշանաւոր մանկավարժ Եակոբ Սիմոնովիչ Գոգեբաշվիլիի թաղումը։

Առաւօտեան ժամը 8-ին Քաշվէթի ս. Գէորգ եկեղեցում սկսվեց պատարագը խուռն բազմութեան ներկայութեամբ։ Պատարագիչն էր Գօրու եպիսկոպոս Անտօնը։

Ցերեկվայ ժամը 11-ին, պատարագի աւարտումից յետոյ, յուղարկաւորութեան կարգը դուրս գալով եկեղեցուց անցաւ Լօրիս-Մելիքեան փողոցը և Պուշկինեան այգու մօտով անցնելով, դուրս եկաւ Դվորցովայա փողոցը, ուր Վրաց թատրոնի առաջ, Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան ներկայացուցիչ՝ վրաց ազնուականութեան գիմնազիայի տեսուչ Ա. Մղիվանին մի դամբանական խօսեց, բնորոշելով հանգուցեալ մանկավարժի բարեմասնութիւնները և նրա մատուցած ծառայութիւնները վրաց ժողովրդին։

Ապա յուղարկաւորութեան կարգը առաջ ընթացաւ Գօլօվինսկի պրօսպեկտով և իջաւ Վէրայի զառիվայրով դէպի Միքայէլեան փողոցը և ապա Դիդուբէի եկեղեցին, որի գաւթում էլ հանգուցեալի մարմինը հողին յանձնվեց։ Բացի բազմահազար ժողովրդից յուղարկաւորութեանը ներկայ էին քաղաքային ինքնավարութեան, տեղական մամուլի, արհեստաւորների (իրանց համքարական դրօշակներով), վաճառականների և հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչները։ 50-ի չափ պսակները տարւում էին առանձին դիակառքերի վրա դրված։ Յուղարկաւորութեան ամբողջ ընթացքում երգում էին մի քանի եկեղեցական խմբեր։

Յուղարկաւորութեան կարգը աւարտվեց ցերեկվայ մօտ 3 ժամին։ Գերեզմանի վրա խօսվեցին բազմաթիւ դամբանականներ։ «Աղբիւր-Տարազի» խմբագրութեան առաջ Տիգրան Նազարեանը Եակօբ Գոգեբաշվիլիի դագաղին դրեց թարմ ծաղիկների մի փունջ, երբ տխուր թափօրն անցնելով «Աղբիւր-Տարազի» խմբագրատան առջևից, կանգ առաւ Գօլօվինսկի պրօսպէկտից դէպի Վէրայի զառիվայրն իջնող հրապարակի վրա, արտասանելով հետևեալ ճառը.

«Յաւերժ յիշատակ հայրենիքին անբիծ սպասաւորած մանկավարժ Գոգեբաշվիլիին։

«Փառք չքնաղ Վրաստանի անխոնջ սերմնացան զաւակին, որ իր մայրենի բուրաստանում շատ տասնեակ տարիներ աճեցրեց զուարթ ու կենսունակ անհամար ծիլեր։

«Վրացի եղբայրակիցներ, «Աղբիւրի» և «Տարազի» խմբագրութիւնը խորասուզված ձեզ հետ խորին վշտի մէջ, գիտակցում է այսօրվայ մեծ կորուստի ծանրութիւնը և երկրպագելով Գոգեբաշվիլիի աճիւնը, վստահանում է թարգման լինել վշտաբեկ վրացիներիդ, որ հայրենասէր մանկավարժի կորուստը ձեզ հաւասար ողբում ենք ոչ միայն մենք, հայերս, այլ և կովկասեան բազմացեղ ժողովրդի գիտակից բոլոր հատուածները, ըմբռնելով վեհ և նուիրական այն փայլուն սպասաւորութիւնը, որ հինգ տասնեակ տարիներ ընծայաբերեց բեղմնաւոր և պայծառ Գոգեբաշվիլին իր մայրենի լեզուին, դպրոցին, իր հայրենիքի բողբոջ սիրասուն սերունդներին»։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Սպանութիւն

Ղալաչա, 6 յունիսի

Նոր լուր բերին, որ արճէցի Սափխանի տների մօտ սպանեցին լճկաձորցի Ասատուրին։ Սպանութեան պատճառը զանազան կերպ են բացատրում։ Մօտ օրերում Ասատուրը Արճէից մի աղջիկ է փախցնում, որոշ տարածութիւն տանելուց յետոյ, աղջիկը դիտմամբ ուշաթափվում է և ջուր խնդրում. տղան ընկած թողնում է և ջրի վազում։ Բայց մինչև նրա գալը՝ աղջիկը փախչում-ազատվում է՝ գիւղ հասնելով։ Ոմանք սպանութիւնը այս դէպքին են վերագրում։

Փօրստէր

Առ այժմ թանգ է

Ղարաքիլիսա, 1 յունիսի

Այս տարի շատ թանգ է այստեղ ամեն բան։

Գառան մսի ֆունտը արժէ 18 կ., ոչխարինը՝ թէև գիւղացիք ասում էին 12 կ., բայց չը նայած նոյն իսկ սակարկութեան՝ ծախվում է 14—15 կ., տաւարի միսը 12 կ., ձուն 10 հատը 17 կ., կարագի ֆունտը 45—50 կ.։

Լաւ կը լինէր եթէ գիւղացիք կամ տեղիս վարչութիւնը մի որոշ տակսա նշանակէին մսի և ընդհանրապէս մթերքների համար։

Այդ պահանջում է նոյնիսկ իրանց գիւղացիների շահը։ Ամարանոցները քիչ համեստ են, օրինակ՝ երկու սենեակ՝ խոհանոցով՝ արժէ 70—80 ր. ամբողջ սեզօնը, մէկ սենեակը՝ 30—40 ր.։

Եղանակները լաւ են. երեկոներն անձրև է տեղում։

Ամարանոցաւոր

Գիւղական դպրոցի անճանաչելի վիճակը

Ղամարլու, 5 յունիսի

Իւվա գիւղը, որը գտնվում է Ղամարլուից մէկ վերստ հեռաւորութեան վրա, բաղկացած է 500 ծխից։ Այդ գիւղի ժողովուրդը բացի հողագործութիւնից և այգեգործութիւնից պարապում է և ամանեղէն շինելով, որի շնորհիւ կարելի է ասել՝ որ այդ գիւղը համեմատաբար շրջանիս բոլոր գիւղերից հարուստ է, նոյն իսկ Ղամարլուից, որը շրջանիս կենտրոնն է և ունի մեծ շուկայ։ Այդպիսի ապահովված գիւղը և լուսաւորութեան կողմից պէտք է աւելի բարձր լինէր, քան թէ միւս գիւղերը, բայց ցաւօք սրտի պէտք է ասել, որ, ընդհակառակը, այդ գիւղի ժողովուրդը Գառնի-Բասարի բոլոր 32 հայ գիւղերի ժողովրդից աւելի ստոր աստիճանի վրա է գտնվում։ Կարելի է ասել, որ ձմերային 4—5 ամիսները, նոյեմբերից սկսած մինչև ապրիլ, առանց բացառութեան բոլոր տղամարդիկ արբած դրութեան մէջ են։ Եւ ուրեմն զարմանալի էլ չէ, որ սրանց միդասեան ծխ. դպրոցը այդպիսի աննախանձելի դրութեան մէջ պէտք է գտնվէր, ինչպէս ներկայումս է։

Առաջին անգամ Իւվա գիւղում շնորհիւ շրջանի միւս գիւղերի մի քանի երիտասարդների, ծխական միդասեան դպրոցը բացվեց 1905/6 թւի աշնանը. մեծ դժուարութիւններով պահվելուց յետոյ, հետևեալ ուսումնական թւի սկզբին փակվեց և միայն անցեալ 1910/11 ուսումնական թւին կրկին բացվեց։ Անցեալ տարվայ ուսուցչից ժողովուրդը դժգոհ էր. Այս տարի էլ խնամակալութիւնը դեր խաղաց. Ուսուցչի պաշտօնով այդ դպրոցում զետեղվեց մի երիտասարդ, որը սովորել է Երևանի քաղ. դպրոցում, ուրեմն և ոչ մի պատրաստականութիւն չունի ուսուցիչ լինելու համար։ Երեք ամիս դասաւանդելուց յետոյ, զինուորութեան է գնում, թողնելով 500 ծխից բաղկացած գիւղի մատաղ սերունդը անտէր, և երեխաները երկու ամիս գիւղի փողոցներում թափառելուց յետոյ՝ կրկին գնում են դպրոց՝ ուրիշ ուսուցչի մօտ։

Թեմ. դպրոց աւարտածը ներկայումս առանց պաշտօնի է մնացել, իսկ քաղ. դպրոցի անձեռնհաս սանը ուսուցիչ է դառնում 400 րուբլով, որովհետև 7 հոգուց բաղկացած հոգաբարձութիւնը էլի չը շեղվեց իր աւանդական տրադիցիաներից և որոշ մարդկանց խաթրը չը կոտրելու համար 500 տնից բաղկացած ամբողջ ժողովրդի շահերը ծառայեցրեց անհատական շահերին։

Երեմիա Սարուխանեան

Առատութեան տարի

Նգի (Շուշու գաւ.), 2 յունիսի

Չը նայած ապրիլ ամսվայ անսպասելի սառնամանիքներին և ձիւնին, որոնք ծառերին և թփերին վնասեցին ու այս շրջանի գիւղացիներին մօտ 70,000 ր. վնաս հասցրին, այնուամենայնիւ արտերը անվնաս մնացին։

Նգի գիւղից մօտ 30 վերստ հեռաւորութեան վրա գտնվում են «Ալըալի» կոչված վարելահողերը, որտեղից օգտվում են բացի նգեցիներից և ուրիշ գիւղացիք. այդտեղի արտերը արդէն հասել են և մեծ հունձ են տալիս։ Գարու հունձը մի շաբաթ առաջ վերջացաւ, տալով առասպելական առատ գարի, մէկին՝ տասնհինգ, այսինքն 1 պուդ ցանողը ստացաւ 15 պուդ գարի։

Ցորենը, որ այսօրվանից են սկսել հնձել, գիւղացիների ասելով, գարուց աւելի լաւ հունձ է խոստանում։ Գիւղացիների ուրախութեանը չափ չը կայ։ Վերջապէս թանգ տարիներին հետևեց էժանութեան տարին և գիւղացու ապրուստը զգալի կերպով թեթևացաւ։ Գարու պուդը շուկայում արժէ 30 կոպ., իսկ ցորենինը, գիւղացիների ասածի համաձայն, լինելու է 50—60 կոպ. պուդը։ Մինչդեռ մինչև հունձը գարին արժէր պուդը 1 ր. 50 կ., իսկ ցորենինը՝ 2 ր.։

Եղջերաւոր կենդանիները շատ թանգ են գնահատվում շնորհիւ այն բանի, որ խոտն առատ է և նրանց պահելը ձեռնտու է ու հեշտ։

Սա. Վարդանեան

Քահանայի եւ երէցփոխի հարցը մեզանում

Ծօճկան (Բօր. գաւ.), 10 յունիսի

Մեր գիւղի ծխատէր Աւետիս քահանայի մահից յետոյ, նրա ծուխը ժամանակաւորապէս յանձնվեց հարևան գիւղի քահանաներից մէկին, որը տարի և կէս ծառայելուց յետոյ էլ չը ցանկացաւ մեզ նայել ու մեզ մօտ յաճախել եկեղեցական օրինակատարութիւններ պատահած դէպքում։ Ուստի տեղացիք, նկատելով որ մեռելները մնում են անթաղ, երեխաները առանց մկրտութեան և գիւղը առանց հոգևոր հովւի անկարող է մնալ, դիմեցին հետևեալ միջոցին։ Այս օրերս հասարակութեան ցանկութեամբ և Շուլաւէրի գործակալի աջակցութեամբ գիւղի համար հրաւիրվեց քահանայ Ղազախի շրջանի քահանաներից Դիլիջանի Նոր-ընտիր ծխատէր տէր-Եղիա Տէր-Աւետիսեանը, որը այժմս եկել է մեր գիւղը և բնակվում է տեղացոց մէկի մօտ, ամենայն բարեխղճութեամբ կատարելով իրան յանձնված պարտականութիւնները։ Նորեկ քահանան մեզ մօտ մնալու համաձայն է։ Տեղացիք այս երկրորդ տարին է, ինչ եկեղեցու զանգի ձայն չէին լսել։

Տեղիս եկեղեցու երէցփոխը վախճանվեց։ Նրա ելևմտի ցուցակների հաշւետուութիւնը չը քննվեց, հանգուցեալի մօտ մնացած՝ եկեղեցապատկան առձեռն գումարները նրա ժառանգներից չը պահանջվեցին. բայց թէ այժմս ով է կառավարում և ում ձեռքին են գտնվում մեր եկեղեցու երէցփոխական գործերը, դեռ անյայտ է։ Այսքանը միայն գիտենք, որ եկեղեցու մի քանի կօպէկները սրա-նրա ձեռքը ընկնելով կորչում են անդառնալի, և եկեղեցին քայքայվել, կաթում է և շուտով փլատակ կը դառնայ, որի մէջ մտնել, աղօթել անկարելի է։ Եթէ երէցփոխական առձեռն գումարներին միացնէ հասարակութիւնն էլ իր կողմից մի որոշ դրամական օժանդակութիւն, այդ դէպքում եկեղեցին կազատվի փլատակ դառնալուց։

Կայծօն Շքեղեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 9 յունիսի

Դուման ընդունում է Նեկրասօվի առաջարկութիւնը, այն է՝ 1913 թւի նախահաշւի մէջ լինեն անհրաժեշտ գումարներ Տաւրիկեան պալատի հիմնական վերանորոգութեան և ծառայողների կացարաններ կառուցանելու համար։ Իսկ մասնաժողովի առաջարկած 1.013,340 ր. գումարը այժմ յատկացնելը՝ մերժվում է։

Մինիստրների օթեակում տեղ են գրաւում մինիստրների խորհրդի բոլոր անդամները՝ գլուխ ունենալով Կօկօվցեվին։

Նախագահն առաջարկում է Դումայի անդամներին յոտնկայս լսել Բարձրագոյն հրամանը։ Դումայի բոլոր անդամները կանգնում են։

Նախագահի աւագ օգնական իշխան Վոլկոնսկին կարդում է Բարձրագոյն անուանական հրամանը յանուն Կառավարիչ Սենատի.

«Հիմնական Պետական Օրէնքների 99-դ յօդուածի հիման վրա հրամայում ենք. Պետական Դումայի զբաղմունքները ընդհատել այս յունիսի 9-ին, մինչև Մենք հրաման կարձակենք Պետական Դումայի նոր կազմի գումարման ժամանակի մասին։ Կառավարիչ Սենատը չի յապաղի ի կատարումն սրա պատշաճը տնօրինելու»։

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով ստորագրված է «ՆԻԿՈԼԱՅ»։

Ցարսկոյէ-Սէլօ, 8 յունիսի 1912 թ.

Ծըդեց՝ մինիստրների խորհրդի նախագահ ստատս-սեկրետար Վ. Կօկօվցեվ։

Դումայի նախագահի առաջարկութեամբ պատգամաւորները աղաղակում են ուռա ի պատիւ Թագաւոր Կայսրի։

Վերջում տեղի է ունենում գոհաբանական մաղթանք Կայսրի և Կայսերական Գերդաստանի արևշատութեան համար Դումայի բոլոր անդամների և մինիստրների ներկայութեամբ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշել է ի յիշատակ Հայրենական պատերազմի 100-ամեակի ժողովրդական Տանը կազմակերպել ժողովրդական ընթերցանութիւններ օգոստոսի 27-ին և այդ օրը քաղաքը լուսավառել։

◆ Մեզ յայտնում են, որ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կարգադրութեամբ Թիֆլիսի նահանգի տարրական դպրոցների ուսուցիչների համար Թելաւում և Բօրժոմում բացված են կուրսեր՝ լրացնելու ուսուցիչների մանկավարժական պատրաստականութիւնը և ծանօթացնելու նրանց գիտութեան նորագոյն մտքի հետ։ Վերոյիշեալ դասախօսութիւններն աւելի արդիւնաւէտ ու լրիւ կացուցանելու համար ցուցադրված են մեծ քանակութեամբ իրագննական պիտոյքներ։ Նոյն տեղերում ցուցադրված են նոյնպէս Թիֆլիսի «Պեստալոցցի» ընկերութեան սեփական արհեստանոցում պատրաստված իրագննական պիտոյքներն ու կօլեկցիաները։

◆ Մենք հաղորդել էինք, որ Վլադիկավկազի երկաթուղագծի Բեսլան-Նարզան-Սլեպցովսկայա կայարանների միջև եղած տարածութիւնը խոշոր հեղեղի շնորհիւ փչացել էր։ Ներկայիս կառախմբերի երթևեկութիւնը, շնորհիւ ձեռք առնված եռանդուն միջոցների, վերականգնած է։

◆ Յունիսի 8-ին քաղաքային տնտեսական մասնախումբը քննելով մսի սակագինը և ի նկատի առնելով, որ ներկայիս մսացու կենդանիները էժանացել են, որոշեց հետևեալ սակագինը. տաւարի մսի ֆունտը պիտի վաճառվի՝ 12 կոպէկով, ոչխարինը՝ 14 կ., գառանը՝ 16 կոպ., իսկ գոմէշինը 7 կոպէկով։

◆ Թոքախտի դէմ Մաքառող Կովկասեան Ընկերութեան վարչութեան խնդրանաց համաձայն, Կովկասի Փոխարքայի պաշտօնակատարը թոյլատրեց կազմակերպել «Սպիտակ ծաղկի տօնը» Պեատիգօրսկում յունիսի 29-ին։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը թոյլ է տուել բանալու Երևանի նահանգի Սուրմալուի գաւառի Ալիզամար գիւղում Ընկերութեան ճիւղ, որի համար արդէն արել է որոշ կարգադրութիւն։

◆ Մեզ հաղորդում են, որ դերասան Հ. Սանթուրեանը, վերադառնալով Թիւրքիայից, ամառային թատրոնական շրջանով մեկնում է Նոր-Բայազէտ, Դիլիջան և Ղարաքիլիսա։ Ամառային ռէպէրտուարը կազմված է միմիայն երկու պիէսայից, որոնք Բօլղարիայի, Ռումինիայի, Թիւրքիայի և Ռուսաստանի զանազան քաղաքներում գտել են որոշ ընդունելութիւն։

◆ Ուսումնարանական շրջանի հոգաբարձուի դիւանատունը յուլիսի 20-ից տեղափոխվելու է Գօլօվինսկի պրօսպէկտի № 34 Օրբելեանի տունը։

◆ Քաղաքային Դումայի իրաւասու Մ. Կարա-Մուրզան թողնում է իրաւասուի կոչումը, որովհետև քաղաքային ինքնավարութեան մէջ պաշտօն է ստանձնում։

◆ Կենդանիներին հովանաւորող Կովկասեան ընկերութեան վարչութիւնը խնդրում է Թիֆլիսի նահանգապետին, որպէսզի վերջինս թոյլատրէ զինուորական վարչութեան այն պաշտօնեաներին, որոնք ցմահ անդամ են այդ ընկերութեան, կրելու յատուկ նշանը, որը բարձրագոյնս հաստատված է 1912 թ. մարտի 7-ին։

◆ Ի յիշատակ Եակօբ Գոգեբաշվիլիի՝ վրաց «Սախալխօ Գազէթի» լրագրի № 612-ը (կիրակի, յունիսի 10) ամբողջապէս նուիրված է նշանաւոր մանկավարժին։ Այդ թերթի յաւելուածի մէջ զետեղված են հանգուցեալի նկարները զանազան տարիքներում նկարված։

◆ Այս տարի ուսուցչական ինստիտուտն աւարտեցին 25 հոգի, որոնք իրաւունք ունեն քաղաքային դպրոցներում ուսուցիչների պաշտօն վարելու։

◆ Թիֆլիսի քաղաքային առաջին ապաստարանում անցեալ մայիս ամսում գիշերել են 179 տղամարդ 2554 անգամ։ Նրանք ըստ ազգութեան բաժանվում են հետևեալ կերպով. ռուսներ՝ 53 տղամարդ, հայեր՝ 66 տղ., վրացիներ՝ 37 տղ., լեհեր՝ 4 տղ., գերմանացիներ՝ 2 տղ., թուրք՝ 1 տղ., օսեր՝ 12 տղ. և զանազան ազգութիւններ՝ 4 տղ.։

◆ Ե. Գոգեբաշվիլիի թաղման ժամանակ վաճառվում էր հանգուցեալի մեծադիր նկարը, որից գոյացած արդիւնքը կը յատկացվի նրա անուանը հիմնված ֆոնդին։

◆ Յունիսի 10-ին, ցերեկով, գանձակեցի Գէորգ Դոլմազեանը, որը այս տարի աւարտել է առևտրական դպրոցը, ատրճանակ ծախելու նպատակով մտնելով գիմնազիստ Եղիազարեանի բնակարանը, զէնքը դիտելու ժամանակ յանկարծակի կերպով կրակեց նրանից, որով թեթևակի կերպով վիրաւորեց Եղիազարեանին, որից յետոյ ատրճանակը առնելով թաքնվեց։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Օշական, 5 յունիսի

Օշականի յօբելեանական յանձնաժողովը որոշել է ս. Մեսրոպի անունը յաւերժացնելու համար Օշականի ս. Մեսրոպեան 3-դասեան դպրոցը դարձնել 4-դասեան (ութամեայ) շրջանային դպրոց, կառուցանել յարմար շէնք, ապահովեցնել նրա գոյութիւնը և բակում կանգնեցնել ս. Մեսրոպի կիսանդրին։ Օշականի ժողովուրդը այս գործին մասնակցելու է իր ույժերի մեծագոյն չափով։ Սակայն յանձնաժողովս, գտնելով որ Օշականը, որն արդէն 4000 րուբլու չափ ծախսում է տարեկան, իր ույժերով չէ կարող այս գործը գլուխ բերել և ի նկատի ունենալով, որ ս. Մեսրոպի շիրիմը ազգի սրբութիւնն է, որոշել է ազգի օգնութեանը դիմել։

Գրութիւնները ուղղել հետևեալ հասցէով՝ Сел. Ошаканъ, чер. Аштаракъ (Эрив. губ.), Араму Агаджанянцу.

Դրամները նոյն հասցէով՝ Месропу Гюлназарянцу.

Հայոց տառերի գիւտի 1500-ամեակի և հայկ. տպագրութեան 400-ամեակի
Օշականի յօբելեանական յանձնաժողովի
Նախագահ՝ Ս. Թորոսեան
Քարտուղար՝ Արամ Աղաջանեան

ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

(Նամակ խմբագրութեան)

«Հորիզոն» թերթը չէ կարողանում մարսել, որ կարող են լինել զարգացած մարդիկ և չը վարակված նեղ եսականութեան ախտով, որ «Մշակի» յօբելեանը տօնելու կարևորութիւնը հասկանում են ոչ անձնական հաշիւների տեսակէտով, այլ հայ մամուլի բարգաւաճման և զարգացման նշան են տեսնում այս գործում։

Ես առաջինը ասացի այդ թերթին, որ ոտից մինչև գլուխ կեղտոտ, գրիչը ծախող, այսօր մի հրապարակախօսի երկինք բարձրացնող և անձնական յարաբերութիւնները լարվելուց յետոյ նոյն մարդուն հայհոյող գրչակը իրաւունք չունի հրապարակախօսի անուն կրելու։ «Հորիզոնը» չէ կարող, ի հարկէ, հերքել, որ Լէօն տօնել է իր յօբելեանը այնպէս, ինչպէս մեր հասարակութեան մէջ սովորութիւն է տօնելու, որ այդ թերթը նոյնպէս վաճառականներից նպաստ է ստացել, որ ես պախարակելի բան չեմ համարում, բայց ասում եմ, որ միևնոյն վարմունք ունեցողը չէ կարող ուրիշին մեղադրել։ Ճշմարտութիւնը չը մարսող թերթը մի ելք է գտել իմ գրածի դէմ, վիրաւորել է ձգտում ինձ և յեղաշրջում է փաստերը։

«Հորիզոնը» իր № 113-ի մէջ գրում է, թէ Ենգիբարեանը մոռացել է, թէ ինչպէս Գր. Արծրունին վռնդեց նրան «Մշակից»։ Ազնիւ մարդը մէկին վիրաւորելու ժամանակ խիղճ և անկեղծութիւն պիտի ունենայ պատմելու փաստը այնպէս, ինչպէս եղել է, բայց «Հորիզոնը» չէ գրում, թէ երբ և ինչպէս և ինչ առիթով է տեղի ունեցել հանգուցեալ Արծրունու և իմ միջև տարաձայնութիւնը։

Որովհետև «Հորիզոնի» համար սուտ ասելը, զրպարտելը, հայհոյելը շատ սովորական բան է, ուստի ես կը պատմեմ, թէ ինչպէս է եղել իրողութիւնը։

Անցած տարիների մասին գրելիս բնական է, որ այս կամ այն իրողութիւնը, լրագրի համարը մարդ մոռանայ. բայց փաստը չը պիտի աղաւաղել։ Դեռ աշակերտութեան ժամանակից ես գրում էի

«Մշակում», և հանգուցեալ Արծրունին իմ Մոսկվայից գրած թղթակցութիւններին նուէրեց նոյն իսկ մի քանի առաջնորդողներ «Ժամանակաւոր իդէալիստներ» վերնագրով։ Այս իսկ ժամանակ, երբ ես ուսանող էի, Մոսկվա էր եկել մի դերասանական խումբ, որ տոմսակները ծախում էր շատ անվայել միջոցներով և առհասարակ անհամակրելի խումբ էր։ Այս խմբի մասին «Մշակին» սխալ տեղեկութիւն էին տուել, և ըէկլամի պէս մի նկատողութիւն տպվեց։ Ինձ դուր չեկաւ այդ նկատողութիւնը, և ես մի նամակ գրեցի հանգուցեալ Արծրունուն, թէ «Մշակը» ըեկլամներ չը պէտք տպագրէ։

Այդ նամակը գրեցի, բայց դեռ չէի ցանկանում ուղարկել, ուստի թողեցի սեղանիս վրա ու գնացի համալսարան։ Իմ բացակայութեան ժամանակ եկել էին իմ սենեակը մի քանի ընկերներ, կարդացել էին, շատ էին հաւանել և առանց իմ գիտութեան իրանք էլ ստորագրել էին ու գցել արկղը։ Ես եկայ տուն և նամակը չը գտայ, երեկոյեան իմացայ իրողութիւնը։ Պէտք է որ ստորագրած լինէին Եղիշէ Մադաթեանը, Մ. Բարխուդարեանը, Կ. Կուսիկեանը և հանգուցեալ Ատոմ Ատոմեանցը։ Արծրունին կարծել էր, թէ ես ուսանողների մէջ ագիտացիա էի արել «Մշակի» դէմ և ստորագրութիւն ժողովել։ Այս առիթով մի պատասխան տպագրեց Արծրունին «Մշակում», ուր ասել էր, թէ իմ յանդուգն նամակը ստացաւ, որի համար կտրում է իր յարաբերութիւնը և որ ես իմ այդպիսի բնաւորութեան համար կեանքում աջողութիւն չեմ կարող ունենալ և որ իր պատասխանը վերաբերում է և իմ այն ընկերներին, որոնք ստորագրել էին իմ նամակը։

Ահա թէ ի՛նչ առիթով և ի՛նչպէս ես հեռացայ «Մշակից»։

Ես չը կամեցայ թիւրիմացութիւնը պարզել, որովհետև միայն մի քանի ամիս անցնելուց յետոյ՝ երբ ամառը եկայ Կովկաս, իմացայ թէ Արծրունին ինչպէս էր հասկացել իմ կամքից անկախ ուղարկված նամակը։ Ես հէնց Մոսկվայից սկսեցի գրել «Արձագանքում» և այսպէս էլ շարունակվեց։ Այս թիւրիմացութիւնից դուրս երբէք Արծրունին ոչ մի այլ առիթով և ոչ մի խօսք իմ դէմ չէ գրել և իր կենդանութեան ժամանակ, երբ կատաղի կռիւներ կային «Արձագանքի» և «Մշակի» միջև և «Արձագանքի» բոլոր աշխատակիցների վրա յարձակումներ էին լինում, երբէք ոչ իմ յօդուածների և ոչ իմ դէմ ոչինչ չէ ասել նա։ Ընդհակառակը հանգուցեալ Ստեփան Պավլովիչ Զելինսկին և հայր Բէգնազարեանը շատ անգամ ասում էին ինձ, որ Արծրունին ոչինչ չունի և իմ դէմ և իմ գրական յօդուածները կը տպագրի։ Յ. Տէր-Մարկոսեանը և Սև-Սանդրօն կենդանի վկայ են, որ Արծրունին իմ դէմ նոյնիսկ չի էլ խօսել, երբ բոլոր արձագանքականների դէմ ամեն օր գրվում էր «Մշակում»։

Եթէ «Հորիզոնը» կապացուցանի, թէ մի ուրիշ առիթով Արծրունին իմ դէմ մի բան է գրել, ես պատրաստ եմ ընդունելու, որ Արծրունին ինձ վռնտել է։ Իսկ եթէ չի կարող ապացուցանել, այն ժամանակ պարզ է, որ «Հորիզոնը» իրողութիւնը ծածկում է իր ընթերցողներից, զրպարտում է և աղաւաղում փաստը, որ սոսկ մի թիւրիմացութիւն էր։ Պէտք է ասել, թէ ինչ և երբ է եղել, այլ ոչ վրէժխնդիր լինել երկդիմի և վիրաւորական խօսքերով։ Բայց «Հորիզոն» և ճշմարտութիւն՝ երկու հակասական հասկացողութիւններ են։ Ամեն բան ստի վրա հիմնել, նեղ, գծուծ հաշիւներով և փաստերը ծածկելով մոլորեցնել՝ ահա այդ թերթի փեշակը։ Չէ՞ որ կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ բազմաթիւ սուտ տեղեկութիւններ էր տալիս և սուտը բռնելիս՝ լռում էր։ Այժմ էլ առաջարկում եմ «Հորիզոնին» միջնորդ դատարանով ապացուցանել, որ Արծրունին ինձ վռնտել է և իրողութիւնը այնպէս չէ եղել, որպէս ես պատմեցի։ Մեղաւոր կողմը պիտի դրամական տուգանք տայ յօգուտ «Մշակի» ֆոնդի 300 ր.։ Եթէ «Հորիզոնը» հրաժարվի այս առաջարկութիւնը ընդունելուց, ես իրաւունք եմ համարում այլևս ոչ մի խօսք չը պատասխանել նրան։

Գ. Ենգիբարեան

Յ. Գ.—Աւելորդ չեմ համարում Լէօյին մի փոքրիկ խրատ տալ բարոյականութիւնից։ Եթէ իրօք Արծրունին ինձ վռնտած էլ լինէր և եթէ ես այսօր ցանկանում եմ նրա հիմնած լրագրի գոյութիւնը ապահոված տեսնել, կը նշանակի, որ ես անդուսպ և ստոր կրքերից քշացող մարդ չեմ։ Իսկ որ պ. Լէօն ոչնչութիւնից և անարժան կերպով մարդ է դարձել «Մշակի» շնորհիւ և այսօր կամենում է տապալել Արծրունու թերթը, այս կը նշանակի, որ նա չար և վատ ինստինկտներով օժտված մարդ է։ Գ. Ենգ.

ԱՆՄԽԻԹԱՐ ԵՐԵՒՈՅԹ

Ո՞ւմ ձեռքերի և խնամքի տակ է կրթվում մեր հայ մանուկ սերունդը. արդեօք համեստ, մանուկներ սիրող, գուրգուրացող հոգու տէր ուսուցիչների՞, որոնց պարտքն է տաշել, կոկել, ուղղել մանուկ սերունդը, ընկերսիրութիւն արթնացնել նրա հոգու մէջ, յարգանք տածել սովորեցնել դէպի իր նման մարդ երեխաները, արմատախիլ անել վատ երևոյթները այն մանուկներից, որոնք պիտի լինեն ապագայի մեր յոյսերն և որոնց ձեռքը պիտի անցնեն մեր բոլոր կուլտուրական հիմնարկութիւնները. թէ՞ ատելութիւն, ծաղրանք ու հայհոյանք, որը բաժին է ընկած անտէր-անտիրական «փողոցի երեխաներին»... Սակայն նրանց համար էլ են մտածում բարի մարդիկ, որ ուղղվեն, լաւ անդամներ դուրս գան հասարակութեան համար, այդ «փողոցի երեխաներից»... Որպէս զի այդ «փողոցի երեխաները» չը զգան իրանց շուրջը եղածներին և որպէս զի կարողանան մեռցնել նրանց հոգու և սրտի մէջ մարդ գազանիկը, գիշեր-ցերեկ, դուռն-դուռը ընկած, բարի մարդիկ կօպէկներ են ժողովում նրանց խնամելու և դաստիարակելու համար. բայց մեր ծխական-դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիները, ընդհակառակը, փոխանակ վերը գրածս բարեմասնութիւններն ունենալու իրանց վեհ և սուրբ պաշտօնի, նոյնիսկ յաւակնութիւն ունենալով աւագութեան տիտղոսը առնել իրանց ուսերի վրա, սկսում են ծաղրել, հայհոյել և զանազան ածականներ տալ իրանց խնամքին յանձնված երեխաներին, այն էլ բոլոր երեխաների առաջ, որոնք նստած են մի շարքում և միևնոյն ուսումնարանի յարկի տակ, և այն ժամանակ, երբ բոլոր երեխաները աչքերը չռած՝ նայում և սպասում են իրանց դաստիարակի բերանին, թէ ինչ մի նոր բան պիտի ասի իրանց հոգևոր հայրը, ուսուցիչը։ Ո՛վ զարմանք. յանկարծ դուրս է թռչում նոր մէթօդիկոս դաստիարակչի բերանից՝ «է՛յ, որջի քոթօթ, ինչ ես անում այստեղ, խոզի ճուտի պէս քիթդ կախել ես»...

Ահա թէ ինչ են լսում բոլոր աշակերտները մի 10—11 տարեկան իրանց ընկերոջ հասցէին՝ աւագ դաստիարակչի բերանից... Անգին մարգարիտներ...

Երեխան իրան վիրաւորված զգալով՝ իր ընկերակիցների առաջ սկսում է լալ, իսկ երբ տեսնում է, որ իր ընկերակիցները ծիծաղում են դաստիարակի խօսքերից սիրտ առած, ինքն էլ սկսում է բարկանալ և յարձակվել ընկերակիցների վրա, որոնք սկսել են կրկնել ուսուցչի բերանից դուրս եկած գոհարները...

Ուրիշ ինչ կարող է պատահել այստեղ, պ. Աղաբաբ...

Ի հարկէ, ծեծը... Սա ոչ այլ ինչ է, մենք կասենք, եթէ ոչ ուսուցիչը աւելի է կարօտ դաստիարակվելու, քան աշակերտները...

Եթէ մարդիկ վերցնում են իրանց վրա մի փափուկ սրբազան պարտականութիւն, պ. Աղաբաբ, ինչպիսին է մանուկների կրթութիւնը, նրանք պէտք է լաւ ըմբռնեն իրանց դերի վեհութիւնն ու սրբութիւնը և պէտք է չափեն իրանց ոյժերը այդ սուրբ և փափուկ դերի առաջ ու պիտի երկիւղածութեամբ մօտենան այն սրբազան սեղանին, որի առաջ շարէ-շար դրված են table bleu-ները։

Եթէ մի անգլիացի Լիվինգստօն տասնեակ տարիներ Աֆրիկայի խորքերում կարողանում էր գաղափար տարածել վայրենի ցեղերի մէջ, Աւետարանի լոյսը տանել հասցնել մինչև Աֆրիկայի խորքերը, առանց նրանց լեզուն հասկանալու, ինչ մի դժուար բան է, աւ.-ուսուցիչ պ. Աղաբաբ, ձեզ համար, հասկացնել աւելի քնքոյշ, աւելի փափուկ ու գուրգուրալի խօսքերով ձեր այն սաներին՝ իրանց պակաս կողմերը, որոնց լեզուն ձեր մայրենի լեզուն է, որոնց վարք ու բարքին քաջ ծանօթ էք և, որ առաւելն է, ձեր մանկութեան օրից սկսած մինչև ձեր միջնակարգ ուսումը աւարտելը (բարձրին չէք արժանացել) ապրել էք միևնոյն միջնավայրում, որոնց զաւակների կրթութեան բաղդը ձեզ է յանձնված...։

Այստեղ ակամայից մարդու բերանից դուրս է թռչում՝ «Ականջդ խօսի Ալէք. Արարատեանի «գիւղական խալիֆա», որ դրանից յետոյ անցել է 30—35 տարի, բայց դեռ հայոց վարժարաններում, այն էլ Թիֆլիսում, գտնվում են քեզ պէս բաղդաւորներ»։

Մկրտիչ Թայիրեան

Ծանօթ. խմբ.—Տպում ենք այս յօդուածը՝ փաստի ճշգութեան մասին պատասխանատուութիւնը թողնելով հեղինակի վրա։ Մեզ անհնարին է թւում հաւատալ, որ մանկական գրքեր հեղինակող ուսուցիչը այդպիսի հակամանկավարժական ընթացք ունենայ։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Իշխ. Տրուբեցկոյն նշանակվում է ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան Մերձաւոր Արևելքի բաժանմունքի կառավարիչ։

◆ Գերմանական և Ռուսաց կայսրների տեսակցութեան ժամանակ Կիդերլէն-Վեխտերը Սազոնովին առաջարկելու է միասին քայլեր անել վերջ դնելու Թիւրք-իտալական պատերազմին, որ սպառնում է Բալկանների խաղաղութեան։

◆ Որոշված է Սամարայում և բանալ պոլիտեխնիկում ագրոնոմիական ու առևտրական բաժանմունքներով։

◆ Յունիսի 5-ին, Բարձրագոյն հաստատվեց 1912 թւի ելևմտի պետական նախահաշիւը։

◆ «Н. Вр.»-ն գոհունակութեամբ արտատպել է Ամերիկայում հրատարակվող «Ազգ» հայ թերթի յօդուածը, որի մէջ «Դաշնակցութիւնը» պարսաւվում է և ռուս կառավարութիւնը գովաբանվում։ Յօդուածը վերջում ապացուցում է, թէ հայերը Ռուսաստանում նոյնպէս լաւ են ապրում։

◆ Անգլիական աղբիւրներից հաղորդում են, որ Իտալիան համաձայն է հաշտութիւն կնքել Թիւրքիայի հետ, եթէ վերջինս այդ կը ցանկանայ։

◆ Իտալական 30 ռազմանաւ ներկայումս գտնվում են Լէմնօս կղզու մօտ։

◆ Թիւրք-իտալական պատերազմի սկզբից մինչև յունիսի 7-ը իտալացիների կորուստների թիւն է 57 օֆիցեր և 588 սպանված և մեռած։

◆ Աւստրիան մեծաքանակ զօրքեր է կենտրօնացնում Բալկանում։

◆ Չինաստանը գտնվում է կազմալուծման նախօրեակին. կառավարութեան բոլոր կարգադրութիւնները մնում են անգործադրելի։ Ռուս-ճապոնական պահանջները մեծանում են։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

9 և 10 յունիսի

ԲԵՐԼԻՆ։ Գէբէլցում ջօրուչիկ Ֆալկենհէյմը ընկաւ 80 մետր բարձրութեան վրա մօնօպլանից և մեռաւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փրաւվեց «Гроза»-ի № 407-ը։

Ժող. լուս. մինիստրը հրահանգագրեց բարեկաւել հին լեզուների դասաւանդութիւնը միջնակարգ դպրոցներում։

Պետ. Խորհրդի ֆինանսական մասնաժողովը արգելք չը գտաւ ընդունելու առանց փոփոխութեան Դումայի ստացված օրինագիծը՝ տարրական ուսման կարիքների համար մի միլիոն ռուբլի յատկացնելու մասին։

ՄՈՍԿՎԱ։ Փակվեց եկեղեցական երգեցիկ խմբերի խմբապետների համագումարը։

ԶԱԳՐԵԲ։ Կալանաւորված գրող Մարինովիչը աքսորվում է Խորվատիայից։

ԿԵԼՑԻ։ Գաւառում սպանել են չորս հոգուց բաղկացած մի ընտանիքի և յափշտակել են 1405 ռուբլի։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Ուկ գիւղում երեք հոգի պօստային բաժանմունքը կողոպտելու ժամանակ ենթարկվեցին հրացանաձգութեան, նրանցից երկուսը սպանվեցին, մինը վիրաւորվեց։

ԲԱԹՈՒՄ։ Ազնուականներ Մէգօնաբատի և Խօբուլավա և գիւղացիներ Սիչինավա, Խօբուլավա և Կիչավա ոստիկանութեանը զինված դիմադրութիւն ցոյց տալու և դրամաշորթութեան համար դատապարտվեցին մահապատժի։ Դատարանը որոշեց միջնորդել Փոխարքայի՝ առաջ թեթևացնելու պատիժը։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Նահանգական արտակարգ զեմստվային ժողովը վճռեց կայսրին ուղերձ մատուցել 1812 թ. յոբելեանի առիթով։

Ռոմանովների Տան 300-ամեակի յաւերժացման համար որոշված է կառուցել տուն գիւղատնտեսական թանգարանի համար 110,000 ր. արժողութեամբ։

ՕԴԵՍՍԱ։ Կիսլովոդսկից հաղորդում են, որ զօրահրամանատար գեն.-լեյտ. Զարուբաեվը մեռել է։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառնային երթեւեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացքը № 2—10 ժ. 8 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 30 ր., Գանձակ 2 ժ. 58 ր., Եւլախ 4 ժ. 29 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 7 ր. երեկ., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ Պօստատար գնացքը № 4—12 ժ. 10 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 3 ժ. 4 ր. գիշ., Գանձակ 6 ժ. 14 ր. առ., Եւլախ 8 ժ. 13 ր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 48 ր. ցեր., Բագու 5 ժ. 20 ր. ցեր.։ Մարդատար գնացքը № 6—2 ժ. 44 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 5 ժ. 34 ր., Գանձակ 8 ժ. 42 ր. երեկ., Եւլախ 10 ժ. 39 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 3 ժ. 21 ր. գիշ., Բագու 7 ժ. 38 ր. առ.։ Խառն գնացքը № 106 (III կամ IV կարգի վագոններով, երբ կարիքութիւն զգացվի)—4 ժ. 37 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 44 ր. առ., Գանձակ 1 ժ. 5 ր. ցեր., Եւլախ 4 ժ. 13 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 11 ժ. 45 ր. գիշ., Բագու 5 ժ. 54 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄ.—Արագ գնացքը № 11—10 ժ. 44 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 40 ր. գիշ., Բաթում՝ 8 ժ. 58 ր. առ.։ Պօստատար գնացքը № 3—9 ժ. 41 ր. ցեր., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 59 ցեր., Բաթում 11 ժ. 36 ր. գիշ.։ Մարդատար գնացքը № 5—6 ժ. 36 ր. եր., հասնում է Միխայլօվօ 10 ժ. 38 ր. գիշ., Բաթում 7 ժ. 26 ր. առ.։ Խառն գնացքը № 107 (III կամ IV կարգի վագոններով, երբ կարիքութիւն զգացվի) 6 ժ. 18 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 32 ր. ցեր., Բաթում 4 ժ. 31 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ պօստատար գնացքը № $^{74}/_{75}$—12 ժ. 40 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 7 ժ. 54 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 24 ր. ցեր., Էջմիածին 4 ժամ 40 րօպ. ցեր., Ուլուխանլու 5 ժ. 7 ր. ցերեկվայ (առանց Երևան մտնելու), Նախիջևան 9 ժ. 50 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 21 ր. գիշ., Մարդատար-ապրանքատար գնացքը № $^{78}/_{79}$ (միայն II և III կարգի վագոններով)—7 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 2 ժ. 18 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 5 ժ. 56 ր. գիշ., Էջմիածին 11 ժ. ցեր., Ուլուխանլու 11 ժ. 26 ր., Երևան 12 ժ. 19 ր. ցեր.։ Մարդ.-ապրանքատար № $^{108}/_{109}$—11 ժամ 28 րօպ. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 7 ժ. 28 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 27 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 40 ր. գիշ., Ուլուխանլու 6 ժ. 15 ր. առ., Երևան 7 ժ. 23 ր. առաւօտեան։

ԲՈՐԺՕՄ.—Մարդատար գնացքը № $^{7}/_{8}$—7 ժ. 58 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 43 ր., Բօրժօմ 1 ժ. 39 ր. ցեր., մարդատար գնացքը № $^{9}/_{10}$—3 ժ. 5 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 48 ր. ցեր., Բօրժօմ՝ 8 ժ. 41 ր. երեկոյեան։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Արագ գնացքը № 1—9 ժ. 56 ր. եր., Պօստատար գնացքը № 3—8 ժ. 56 ր. առ.։ Մարդատար գնացքը № 5—5 ժ. 51 ր. ցեր.։ Խառն գնացքը № 107—4 ժ. 56 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—Արագ գնացքը № 12—9 ժ. 18 ր. առ.։ Պօստատար գնացքը № 4—11 ժ. 15 ր. գիշ.։ Մարդատար գնացքը № 6—1 ժ. 59 ր. ցեր.։ Խառն գնացքը № 106—3 ժ. 40 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պօստ. գնացքը № $^{72}/_{73}$—7 ժ. 26 ր. առ., մարդատար-ապրանքատար գնացքը № $^{74}/_{75}$—8 ժ. 33 ր. եր.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № $^{80}/_{81}$—12 ժ. 48 ր. ցեր.։

ԲՈՐԺՕՄԻՑ.—Մարդատար գնացքը № $^{7}/_{8}$—7 ժ. 8 ր. առ., մարդատար գնացքը № $^{9}/_{10}$—9 ժ. 8 ր. երեկոյեան։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզաստ. հ.։
Գ. Յ. ԳՈՒՐԳԷՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ — 1—2 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—53

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՄԻ ՀԱՇՒԱՊԱՀ
հմուտ իր գործին և երկար տարիների փորձառութեամբ, ցանկանում է պաշտօն ունենալ. հաշիւները կարող է բացի ռուսերէնից՝ պահել նաև հայերէն լեզուով։ Համաձայն է գնալ նաև օտար քաղաք։
Պայմանների մասին դիմել «Մշակի» գրասենեակ, ցեր. ժամը 2—3-ը, Վ. Հայկազնին։
(հ.) 431. 2—1

ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ.
Լոյս տեսաւ
ՆԱՐ-ԴՈՍԻ
„ՄԱՀԸ“
Վէպ. 531 երես։ — Գինը 1 ր. 20 կոպ.
Վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրախանութներում։ Պահեստը Ընկերութեան մօտ. Тифлисъ, Кавказское Армянское Издательское Общество, Бебутовская, № 25.
(հ.շ.կ.ե.) 411. 5—5

ԱԲԱՍԹՈՒՄԱՆ
այցելողների (առողջների) համար մատչելի գնով վարձով տրվում է կահաւորված ՉՈՐՍ մաքուր սենեակ, վերևի յարկում, և մի ընդարձակ խոհանոց։ Հասցէն՝ Աբասթումա՛ն Տիգրան Մէտանճեանին։
(ե.) 423. 2—2

ԲԺՇԿԱԿԱՆ ՖԵԼԴՇԵՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Семеновская ул., № 9. Ժամը 3—4-ը։

Ա. ԵՍԱՅԵԱՆԻ
ԳԱՂՏՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԲԺՇԿԱՐԱՆ
բազմաթիւ խորհուրդներով, ըէցէպտներով և նկարներով. գինը 50 կոպ. ճանապարհածախսը 15 կ. մարկաներով։ Բժշկարանը պահանջողներին ՁՐԻ, իբրև պրէմիա, միաժամանակ կուղարկվի նոր լոյս տեսած ծիծաղաշարժ վօդեվիլ՝ «ԿՆԻԿԱՐՄԱՏԻ ՁՈՒԼԱՐԸ» (առանձին՝ գինն է 20 կոպ.)։
Դիմել՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Артемію Есаянцу.
(ե.հ.կ.) 287. 50—18

Ղարասուբազարի հայոց եկեղեցու համար հարկաւոր է ձայնագրութեան ծանօթ
ՀՄՈՒՏ ԴՊԻՐ
առնուազն ճեմարանի կամ թեմական դպրոցների 5-րդ կամ 4-րդ դասարանի վկայականով, որ կարողանայ դպրոցումն էլ դասաւանդել երգեցողութիւն, գծագրութիւն և վայելչագրութիւն։ Պայմաններն են. դըպրոցից կը ստանայ ռոճիկ 200 ր., եկեղեցուց՝ 180 ր. և արդիւնք 250—300 ռուբլի։
Դիմել՝ г. Карасубазаръ (Таврич. губ.), Священнику Аствацатуру Мѣдникяну.
(օ.մ.) 432. 3—1

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏ. ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ.
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ի տեղեկութիւն հայ ծխական և ժողովրդական դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիների և ցանկացողների,
◆ որ յունիսի 14-ից Ալէքսանդրօպօլում ԲԱՑՎՈՒՄ ԵՆ
ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
որ տևելու են մինչև օգոստոս ամսի 18-ը ◆
Դասընթացքներում դասաւանդվելու են հետևեալ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ.
1) ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ՝ ընդհանուր և մասնաւոր։ 2) ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ, ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ և ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ։ 3) ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ։ 4) ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ։ 5) ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ և ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ։ 6) ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆՕԼՕԳԻԱ։ 7) ԿՕՕՊԵՐԱՑԻԱ և վարկային ընկերութիւններ։ 8) ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ։
Դասընթացքների ունկնդիրներին յատկացվում է ձրի բնակարան հանրակացարանում։ Դասընթացքների լրիւ կուրսը լսողները վճարում են երեք ռուբլի։ Խնդիրները մինչև յունիսի 10-ը ներկայացնել հետևեալ հասցէով. г. Александрополь, Александру Шатиряну.
Յունիսի 10-ից յետոյ՝ г. Александрополь. Лѣтніе Сельско-Хозяйственные Курсы.
4—4 391. (ե. ու.) ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետևեալ հրատարակութիւններից

1) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I	գ. 1 ր. —
2) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրժինի, I և II հատորներ	1 ր. 50
3) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի	— 50 կ.
4) ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ Քամալեանց Ս-ի.	— 50 կ.
5) ՋՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ, վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի	1 ր. — կ.
6) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի	— 40 կ.
7) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգոյի, թարգմ. Արշակ Սաֆարեանի	1 ր. 50 կ.
8) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սպիրիի, թարգմ. գերմ. Իս. Յարութիւնեանի,	— 50 կ.
9) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտական վէպ Կամիլ Ֆլամարիօնի. թ. Հ. Առաքելեանի	1 ր. 50 կ.
10) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր. 20 կ.
11) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի	— 40 կ.
12) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բորդոյի, թարգմ. Հ. Առաքելեանի	— 60 կ.
13) ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ, բժշկպ. Գ. Բաբեանի	
I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն	1 ր. —
II » Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բառարան	1 ր. 60 կ.
14) ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ, բժ. Ա. Բուդուղեանի	— 5 կ.
15) ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ խօլերայի մասին, բժ. Վ. Արծրունու	— 15 կ.
16) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի	— 50 կ.
17) ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՑՈՒԿՆԵՐԸ, Հ. Իբսէնի, թարգմ. Լ. Բաբայեանի	— 50 կ.
18) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, թարգմ. Հ. Առաքելեանի	1 ր. —
19) ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՇԵՄՔՈՒՄ, դրամ. էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Բ.-ի	— 40 կ.
20) ՆՇԱՆՎԱԾՆԵՐ, պիէս 3 գործ., Ալ. Արէլեանի	— 60 կ.
21) ԷԴՄՕՆՏ, ողբերգ. 5 գործ. Վ. Գ. Գէօթէի, թարգմ. Հմ. Մաժինեանի	— 50 կ.
22) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, Լ. Ն. Տօլստոյի, թարգմ. Սուրխաթեանի	— 30 կ.
23) ԿՈՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), Լ. Ն. Տօլստոյի խմբագրութեամբ կազմեց Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրխաթեանի	— 7 կ.
24) ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐ ՄԱՀՈՄԵԴԻ, ընտրված Լ. Տօլստոյի, թ. Լ. Դանիէլեանի	— 5 կ
25) ԱՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՍՏՈՒԱԾ ՄԷԿ Է, Լ. Տօլստոյի, թարգմ. Լ. Դանիէլեանի	— 5 կ.
26) ՔՈՅՐԵՐԸ, Լ. Տօլստոյի, թարգմ. Լ. Դանիէլեանի	— 5 կ.
27) ԻՆՉՈ՞Վ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, Լ. Տօլստոյի, թարգմ. Լ. Դանիէլեանի	— 10 կ.
28) ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Պետրոս Ադամեանի	1 ր. —
29) ՑՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի	— 40 կ.
30) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վիպագրութիւն), Ստ. Մալխասեանցի	— 20 կ.
31) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի	— 35 կ.
32) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով	— 15 կ.
33) ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ, Ե. վ. Տէր-Մինասեանի	— 25 կ.
34) ԱՆԳԼԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, թարգմ. Մ.-ի	— 15 կ.
35) ՃԱՊՕՆԻԱ կամ ծագող Արեգակի երկիրը, Գ. Ի. Շրէյդէրի	— 25 կ.
36) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	— 30 կ.
37) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	— 25 կ.
38) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՑ, Մակ. եպ. Բարխուտարեանի	— 80 կ.

Նրանք, որոնք կը դիմեն մեզ՝ պահանջելով վերոյիշեալ գրքերից 5 ռուբլուց բարձր գումարի՝ կը ստանան 25% զեղչ։ 10 ր. բարձր գումարի պատուէր տուողներն ստանում են 30% զեղչ։
«Մշակի» բաժանորդներից նրանք, որոնք վերոյիշեալ բոլոր գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն, կը ստանան 40% զեղչ։
ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ։ 50—29

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.